Ազգ
Azg
17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2010 ՈՒՐԲԱԹ 233(4613)
ISSN: 1829-1651

## Մեդվեդեւն անհանգստացած է

Հաշվի առնելով, որ Ռուսաստանում անցնող տարում ազգայնամոլ ծայրահեղական դրսեւորումները մեկ քառորդով աճել են՝ 2009-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ինչը նախագահ Մեդվեդեւին լրջորեն անհանգստացրել է, վերջինս երեկ երեկոյան հանդես է եկել հայտարարությամբ. «Պահանջում եմ խստորեն կասեցնել անհավասարակշիռ ցույցերը, բանտ նստեցնել բոլոր մեղավորներին, հատկապես նրանց, ովքեր ազգամիջյան խռովություններ են հրահրում»: Ռուսաստանի խոշոր քաղաքներում վերջին օրերին տեղի ունեցած զանգվածային անկարգությունները, որոնք ստիպել են Մեդվեդեւին անհանգստանալ, ըստ մի շարք ռուսաստանյան լրատվամիջոցների, մեկ այլ բան են խորհրդանշում. երկրում անկարգությունների թվի աճը «ավետում» է Պուտինի վերադարձը: Միգուցե սա ավելի՞ շատ է անհանգստություն պատճառում Մեդվեդեւին:

Հ. Ա.

## ՀՌԱՀ-ը շարունակում է իր վնասակար քաղաքականությունը


ՖՈՏՈԼՈՒՐ

Այնքան սպասված նիստը տեղի ունեցավ եւ արդարացավ հեռուստեսների նախատեսությունը՝ «Ա1+»-ը եւս մեկ անգամ զրկվեց հայկական եթերին վերամիանալու հնարավորությունից, իսկ «ԱԼՄ»-ն՝ շուրջ 10 տարի զբաղեցրած եթերից: Երկրորդի՝ «ԱԼՄ»-ի մասին կարելի է անվարան ասել, որ այն ամենավատը չէր մրցույթն անցած հեռուստաընկերություններից եւ գրեթե ամեն ինչում գերազանցում է իր մրցակից՝ անդեմ ու անիմաստ «Երեւան» հեռուստաընկերությանը, իսկ «Ա1+»-ը՝ «Արմնյուզին», որի գոյության իմաստը եթե Euronews-ի վերահեռարձակումն է, ապա եվրոպական այդ ալիքին հետեւողները միշտ էլ նախընտրել ու նախընտրում են դիտել նրա ռուսերեն տարբերակը Հայաստանում: Ինչ վերաբերում է «Ա1+»-ին, ապա այն իր լուրերի բլոկով կարող էր ոչ միայն այլընտրանք, այլեւ ստեղծագործաբար աշխատելու խթան դառնալ մեր մյուս հեռուստաընկերություններին, եւ, ավելի կարեւորը, ձերբազատվել մեր երկիրը անընդհատ միջազգային քննադատության նշավակ եւ տեղական ընդդիմության հարձակումներին առիթ տալու փորձություններից: Գիտենք, պրն Ամալյանը կրկին խոսելու է մրցույթին ներկայացվող ծրագրերից, նույնիսկ «Ա1+»-ի պարագայում զանազան անճշտություններից, բայց դրանք չեն կարող համոզել մեր հասարակությանը, որի կարծիքը «Ամալյանի հանձնաժողովի» վերաբերյալ չի փոխվելու: Իրավացիորեն:

*«Ազգ»*

*Տես էջ 2*

ԱԶԳԱՅՆԱՄՈԼԱԿԱՆ ՀՐԱՀՐՈՒՄՆԵՐ

## «Մի՞թե ոչ ոք ամոթ չի զգում»

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**Դեկտեմբերի 15-ին, Մոսկվայի ժամանակով երեկոյան ժամը 20:50, երբ Ռուսաստանի մայրաքաղաքի տարբեր վայրերում, ըստ ռուսական լրատվամիջոցների ու ականատեսների, բախումներ էին տեղի ունենում ազգայնամոլ ծայրահեղականների կատարելու հավանականությունը եւ ֆուտբոլի աշխարհի 2018-ի առաջնությունը, որը պետք է ընդունի Ռուսաստանը»: Միեւնույն ժամանակ վարչապետ Պուտինի ներկայացուցիչը ռուսաստանյան լրատվամիջոցներին հաղորդեց, որ «Վլադիմիր Պուտինը չի մեկնաբանի տեղի ունեցած իրադարձու**



**ու կովկասցիների միջեւ, Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սոբյանինը մասնակցում էր «դիվանագիտական ընդունելության»: Հենց այս պատճառով, ըստ «Էխո Մոսկվի» ռադիոկայանի, Սոբյանինը հրաժարվել է մեկնաբանել լայնամասշտաբ անկարգությունները քաղաքում: Ի դեպ, նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ քաղաքապետը «քննարկում էր Մոսկվայի տնտեսության մեջ ներդրումներ թյունները»: Նախագահ Մեդվեդեւն էլ գրեթե ամբողջ օրն անցկացրեց Նիժնի Նովգորոդ քաղաքում, որտեղ հանդիպել էր արհմիությունների ղեկավարներին, որոնց հետ «անկեղծանալով» ընդգծել էր՝ «Առանց աշխատանքային միգրանտների մենք չենք կարող, սակայն նրանց աշխատանքով ապահովելը չպետք է լինի ի հաշիվ մեր քաղաքացիների»:**

*Տես էջ 2*

## Պաշտոնանկությունների շարքը շարունակվում է. Նախարարի կաբինետը լքել է Ներսես Երիցյանը

Հայրենի իշխանությունները տարին ավարտում են պաշտոնանկությունների շարքով: Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի եւ արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանի պաշտոնանկություններից հետո սպասելի էր, որ առաջիկայում նոր գործընթացներ կծավալվեն. կառավարության կազմը կփոխվի:

Նախագահի՝ կառավարության կազմում կադրային փոփոխություն իրականացնելու մտադրությունը փաստել է նաեւ ՀՀ նախագահի մամլո խոսնակ **Արմեն Արզումանյանը**. «Առաջիկայում ՀՀ կառավարության կազմում տեղի կունենան կադրային փոփոխություններ, որոնց մասին պատշաճ կարգով եւ ժամանակահատվածում կտեղեկացնենք», ասել է նա:

Թեպետ պաշտոնապես չի հաստատվել, սակայն երեկ նախագահը պաշտոնանկ է արել էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանին: Երիցյանին այդ պաշտոնում կփոխարինի ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը, իսկ հանրապետության գլխավոր ֆինանսիստ կնշանակվի ԿԲ փոխնախագահ Վաչե Գաբրիելյանը:

Տիգրան Դավթյանն արդեն աշխատել է էկոնոմիկայի ոլորտում: Նա էկոնոմիկայի նախարարություն վերանվանված առեւտրի եւ տնտեսության զարգացման փոխնախարարն էր: Սրանով պաշտոնանկությունների շքերթը չի ավարտվի:

Ամենայն հավանականությամբ առաջիկայում պաշտոնանկ կարվեն նաեւ գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանը եւ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը:

Պաշտոնանկվող նախարարների ցանկում շրջանառվում են նաեւ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի եւ առողջապահության նախարար Հարություն Քուշկյանի անունները:

Ըստ շրջանառվող խոսակցությունների, Քուշկյանը պաշտոնանկ կարվի հունվարին, իսկ Աշոտյանին կփոխարինի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի ռեկտոր Գոհար Քյալյանը:

Ինչպես «**Ազգ**»-ը նախօրեին նշել էր, երեկ կրկին տեղի ունեցավ ՀՀԿ գործադիր նիստ՝ ՀՀ նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ:

Իշխող կուսակցությունը քաղաքապետի երկու թեկնածուներից՝ «Հայռուսգազարդի» տնօրեն Կարեն Կարապետյան եւ փոխքաղաքապետ Տարոն Մարգարյան, նախապատվությունը տվեց առաջինին: Այսօր Երեւան քաղաքի ավագանին կընտրի նոր քաղաքապետին:

Հ. Հ.

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Գուրգեն Մահարու վերաբերմունքը Հովհաննես Շիրազի եւ նրա քնարերգության հանդեպ՝ «Մահարու անհայտ գրախոսականը»՝ ներկայացնում է Գրիգոր Աճեմյանը:**

**Հրանտ Մաթեւոսյան-Հակոբ Մնձուրի՝ գրական հոգեկցություն՝ ըստ Վազգեն Գաբրիելյանի:**

**Հայազգի արվեստի հայտնի հավաքորդ եւ պատկերասրահների սեփականատեր Լարի Կակոսյանի հետ «Փայնենշըլ թայմս» թերթի մեկնաբան Ջեքի Վուլշլագերի հարցազրույցը Հակոբ Ծուլիկյանի թարգմանությամբ:**

**Լեւոն Սարգսյանը՝ կրկին մայրենի լեզվի պաշտպան. «Խոհեր «Է»-ի մասին»:**

**Սերունդների կապ՝ հանդիպում Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության Հայկական համայնքների բաժանմունքի տնօրեն Զավեն Եկավյանի եւ նրա որդու՝ Տիգրանի հետ:**

**Արվեստի խաչմերուկներում՝ ակամա հարցազրույց Պողոս Հայթայանի հետ:**

## Լոնդոնի Բարձրագույն դատարանը հաստատեց. Ասանժն ազատ է՝ գրավի դիմաց

Երեկ Բրիտանիայի մայրաքաղաքի Բարձրագույն դատարանը, BBC-ի փոխանցմամբ, հաստատեց WikiLeaks-ի հիմնադիր, Ավստրալիայի քաղաքացի Ջուլիան Ասանժին գրավի դիմաց ազատելու որոշումը: Հիշեցնենք, Ասանժի նկատմամբ Շվեդիան ներկայացրել է մեղադրանք՝ սեռական բնույթի հանցագործություններ կատարած լինելու հիմքով: Ջուլիանը, որը հերքում է բոլոր մեղադրանքները, դեկտեմբերի 7-ին ինքնակամ ներկայացավ Սքոթլանդ Յարդ: Իսկ Լոնդոնի դատարանն էլ դեկտեմբերի 14-ին որոշում կայացրեց, որ 200 հազար ֆունտ ստեռլինգ գրավ մուծելու պայմանով Ասանժը կարող է ազատ արձակվել դատարանի դահլիճից: Սակայն շվեդական դատախազությունը բողոքարկել էր դատարանի որոշումը, եւ ահա երեկ բրիտանական Բարձրագույն դատարանը անբեկանելի թողեց շրջանային դատարանի կայացրած վճիռը: Ասանժի դատապաշտպան Սթիվենսոնը արդեն հայտարարել է, որ «իրենց կողմնակիցները հավաքել են անհրաժեշտ գումարը՝ գրավը մուծելու համար»: Բացի 200 հազար ֆունտ ստեռլինգը մուծելուց, Ասանժը ստիպված կլինի ոստիկանությունում թողնել իր անձնագիրը եւ գտնվել հատուկ վերահսկողության տակ մինչեւ հունվարի 11-ը. հենց այդ օրը նախատեսված է Ասանժին Շվեդիային հանձնելու վերաբերյալ դատական նիստի շարունակումը:

Ի դեպ, բրիտանացի լրագրող Վոռն Սմիթը, որը, ինչպես Ջուլիանի այլ համակիրներ, եղել է Լոնդոնի դատարանի առջեւ, հայտարարել է, որ ինքը մեծ սիրով հրավիրում է Ասանժին բնակություն հաստատելու իր՝ Սաֆոլքում գտնվող ընտանեկան կալվածքում:

Հ. Ա.

## WikiLeaks-ը շարունակում է հրապարակել Ալիեւ կրտսերի «շաղախոսությունը»

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, պարզվում է, շատ է սիրում բամբասել կամ առնվազն «ներկայացնել» իր դատողություններն ու գնահատականները տեղի ունեցող եւ չունեցող տարբեր երեւույթների առնչությամբ: Ամեն դեպքում, ըստ Wikileaks կայքէջի, որ շարունակում է բացահայտել ամերիկյան դիվանագետների «դիվանագիտական» հաղորդագրություններն ու գաղտնի փաստաթղթերը, Ալիեւը քաղաքական գործիչ ու երկիր, երկրի ղեկավար ու միջազգային կազմակերպություն չի թողել, որի մասին կարծիք արտահայտած չլինի ամերիկյան դիվանագետների հետ շփումներում:

«Guardian»-ի վերջին հրապարակման համաձայն, Ալիեւը հասցրել է նաեւ դժգոհել «Բրիթիշ պետրոլիումից», թե վերջինս «թեթեւակի շանտաժի է ենթարկում» Ադրբեջանին: Ջուս գազային հարաբերությունների կտրվածքով դրանցում Ադրբեջանն ու նավթային ընկերությունը, ըստ 2006 թ. գրված ու ներկայումս գաղտնազերծված փաստաթղթերի, փաստացի առաջնորդվում են ամենաառովրական «բազարի» կանոններով:

Ալիեւն իր հերթին է սրա-նրա քթի առաջ խաղարկում այդ ժամանակահատվածում գազ գնելու Ռուսաստանի ներկայացրած առաջարկը, բրիտանական ընկերությունն էլ իր շահերի շրջանակներում է շահարկում իր հնարավորությունները՝ որոշ հարցերում զիջումներ անելու պատրաստակամությունը Ալիեւի վրա «վաճառելով» Ադրբեջանում գործունեություն ծավալելու մասին պայմանագիրը երկարաձգելու դիմաց:

Առավել հետաքրքրական է, որ այս ամենը Միացյալ Նահանգներ է հասցրել հենց Ադրբեջանում ԱՄՆ դեսպանը, ընդ որում՝ «Բրայզայի ուշադրությանը»: Ընդ որում, ըստ գաղտնազերծված հաղորդագրության, Ալիեւը ԱՄՆ դեսպանին է ներկայացրել մինչ այդ Բաքու այցելած Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Ֆրադկովի հետ քննարկումների մանրամասները: Այս ժամանակահատվածում էլ, ինչպես եւ այլ պարագաներում, Ալիեւը հայտնել է, թե «Թուրքիայի մոտեցումը անկեղծ չէ», նկատի ունենալով սպասվող եռակողմ Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա հանդիպումը՝ քննարկելու էներգետիկ հարցեր:

«Guardian»-ը հրապարակել է նաեւ դիվանագիտական հաղորդագրություններ, որ մինչեւ Մեքսիկական ծոցում տեղի ունեցած հայտնի վթարը միջադեպ է տեղի ունեցել Ադրբեջանում՝ 2008-ի սեպտեմբերին: Որպես Մեքսիկական ծոցից աղետից ոչ պակաս աղետ է նշվում գազի արտահոսքը Շահ-Դենիզ հանքավայրում: Ընդ որում, Ադրբեջանում տեղի ունեցած այս վթարը British Petroleum-ը ամեն կերպ փորձել է թաքցնել:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ստեփանակերտի օդանավակայանը կշահագործվի գարնանը

«Ճախրող թռչուն»: Երբ ճարտարապետ Տիգրան Բարսեղյանին առաջարկեցին նախագծել Ստեփանակերտում վերակառուցվելիք օդանավակայանը, ճարտարապետը շենքը պատկերեց հենց ճախրող թռչունի տեսքով:

«Դա ճախրանքի տրամադրություն կստեղծի նաեւ ուղեւորների մեջ, ազատություն եւ անկախություն կխորհրդանշի», ասում է ճարտարապետը:

1200 քմ ընդհանուր տարածք զբաղեցնող օդանավակայանը Ստեփանակերտից 8 կմ է հեռու: **Տիգրան Բարսեղյանը** նշում է. թեեւ այն փոքր օդանավակայան է, սակայն աշխատակիցները հոգացել են ուղեւորների ոչ միայն անվտանգ թռիչքի, այլեւ հարմարավետության մասին:



Երկհարկանի գեղեցկուհին կունենա նաեւ բար, սրճարան, ավտոկայանատեղի, բուժկետ, VIP սրահ հատուկ հյուրերի համար:

Շենքի կառուցումը կավարտվի դեկտեմբերի վերջերին. օդանավակայանից թռիչքներ կիրականացվեն գարնանը:

ԼՂՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի վարչության (ՔԱՎ) աշխատակազմի ղեկավար **Դմիտրի Աղբաշյանն** «**Ազգի**» հետ զրույցում պատմում է, որ օդանավակայանի վերակառուցման ընդհանուր արժեքը կազմում է 5 մլն դոլար. մինչ այժմ ծախսվել է 2 մլն դոլար:

«Վերակառուցման աշխատանքներն ավարտելուց հետո օդանավակայանը կկարողանա ընդունել CRG 200 մակնիշի կանադական օդանավերը: Նման երկու ինքնաթիռ է նախատեսվում ձեռք բերել: Օդանավակայանը կկարողանա ընդունել նաեւ AIRBUS 320 տիպի ինքնաթիռներ, սակայն դրանք մեր օդանավակայանի համար մեծ կլինեն», ասաց Աղբաշյանը:

Չվերթերը կիրականացնի «Արցախավիա» պետական ձեռնարկությունը: Երեւան-Ստեփանակերտ թռիչքը կտեւի 35 րոպե, տոմսի արժեքն էլ չի գերազանցի 15.000 դրամը:

«50-տեղանոց օդանավի մեջ, եթե 35 ուղեւոր լինի, արդեն շահավետ է»:

Սկզբում նախատեսվում է օրական մեկ չվերթ իրականացնել: Հետագայում չվերթերի թիվը կշատանա: Աղբաշյանը փաստում է, որ Ղարաբաղում կան համապատասխան օդաչուներ, օդանավակայանի տեխնիկական աշխատողներ:

Կան հին աշխատողներ, ովքեր ժամանակին աշխատել են ավիացիայի ոլորտում: Դրսից որեւէ մեկին չեն հրավիրի: Շեշտը կդնեն երիտասարդ մասնագետների վրա, այժմ փորձառու ավագ գործընկերները դասընթացներ են իրականացնում եւ թռիչքի հմտություններն ու նրբությունները նրանց փոխանցում:

Աղբաշյանը հավաստիացնում է՝ ինքնաթիռներ գործարկելը տնտեսապես շահավետ կլինի: Անձամբ բիզնես պլան է մշակել, պարզվել է, եթե օդանավը թեկուզ 70 տոկոսով բեռնված լինի, ապա կարելի է թռիչքը շահավետ որակել:

ԱԶԳԱՅՆԱՄՈԼԱԿԱՆ ՀՐԱՀՐՈՒՄՆԵՐ

# «Մի՞թե ոչ ոք ամոթ չի զգում»

*1-ին էջից*

Հենց այս համայնապատկերում Թբիլիսին հայտարարեց՝ «Մոսկովյան վերջին դաժան անկարգությունները ունեն երկու անուն՝ «Պուտին» եւ «Մեդվեդեւ»»: Թե որքանո՞վ «ազդվեց» Մոսկվան հարեւան Վրաստանի հայտարարությունից՝ դժվար է ասել, ուղղակի նկատենք, որ դրանից հետո ե՛ւ Սոբյանինը, ե՛ւ Պուտինը, ե՛ւ Մեդվեդեւը խոսեցին նախկին ԽՍՀՄ մայրաքաղաքում «կովկասցի-ազգայնամոլ պատերազմից»: Այսպես, քաղաքապետ Սոբյանինը «Ռոսիա-24» հեռուստաընկերության եթերում, ընդգծելով, որ «մոսկովյան ոստիկանությունը կճնշի բոլոր տեսակի պրովոկացիաները՝ անկարգություններ հրահրելու քաղաքում», ասաց. «Ես խորհուրդ կտայի որոշ տաք գլուխների չգնալ պրովոկացիաների. ոստիկանությունը շարունակելու է խստորեն ճնշել բոլոր տեսակի բռնություններ իրականացնողներին: Այս պահի դրությամբ ասեմ, որ մենք ոչ մի տեղեկություն չունենք՝ դեմքերից տուժողների մասին, հետեւաբար՝ այդպիսիք չկան: Ոստիկանությունը վերահսկում է քաղաքի ամբողջ տրանսպորտը, այդ թվում՝ մետրոն, փողոցները եւ այլն»: Մինչդեռ «ՌԻԱ Նովոստի»-ի «անանուն աղբյուրները» ուժային կառույցներից հաղորդել են, որ դեկտեմբերի 15-ի իրադարձություններից տուժել են 30 հոգի, որոնցից հինգին հոսպիտալացրել են:

Ինչ վերաբերում է ձերբակալվածներին, ապա նրանք, ըստ ռուսական լրատվամիջոցների վերջին տվյալների՝ 1300-ից ավելին են, որոնցից շատերի ձեռքերին եղել են տարբեր սառը զենքեր, պայթուցիկներ, «ինքնապաշտպանության համար նախատեսված՝ վնասատու հրազեն», որի ազատ վաճառքը Ռուսաստանի օրենսդրությունը թույլ է տալիս, եւ անգամ կացին: Ընդ որում՝ ռուսական «Կոմերսանտը» գրում է, որ ձերբակալվածներից շատերը կովկասցիներ են: Նշենք նաեւ, որ ձերբակալվածների թվին են դասվում նաեւ այն կովկասցիները, որոնք՝ փաստաթղթերի ստուգումներ իրականացնելու համար տարվել են ոստիկանության բաժանմունքներ: Նշվում է նաեւ, որ ձերբակալվել է ռուս ազգայնամոլ ծայրահեղական շարժումներից մեկի պարագլուխը, որի անունը չի հրապարակվում: Այժմ ոստիկանությունը ու դատախազությունը որոշում են նրանց մեղադրանքներ հարուցելու հարցը՝ ոմանց քրեական, ոմանց վարչական պատիժների ենթարկելու կապակցությամբ: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը՝ «Մոսկվայի համար լարված օրերի ընթացքում» քաղաքային ու դաշնային ոստիկանության, այլ՝ ներգրավված ուժային կառույցների աշխատանքը գնահատել է «անչափ պրոֆեսիոնալ»: Վարչապետ Պուտինը, սակայն, այդ կարծիքին չէ: Երեկ կայացած ինտերնետ-հարցազրույցում՝ քաղաքացիների հետ, պատասխանելով նրանցից մեկի հարցին, Պուտինն ասել է. «Նախ՝ կովկասցի ազգ գոյություն չունի. կան հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ, աբխազներ, օսեր ու հյուսիսկովկասցի մեր համաքաղաքացիներ, բացի այդ, ես կարծում եմ, որ իշխանությունները լավ չեն աշխատել, նրանք պարտավոր էին, երբ դեռեւս Եգոր Սվիրիդովի սպանության մեղադրանքով ձերբակալեցին մի քանի հոգու, բաց չթողնել ոչ ոքի: Բացի այդ՝ ոստիկանությունն ու համապատասխան կառույցները պարտավոր են վերահսկել անգամ ինտերնետ ռեսուրսները, չէ՞ որ հենց ինտերնետում էր ընթանում ակտիվ քարոզարշավ՝ դեկտեմբերի 15-ին կազմակերպելու անկարգություններ»: Ի դեպ, ինտերնետի մասին. երեկ BBC-ի ռուսական ծառայության համապատասխան թեմայի լրատվության բլոգում 55-ամյա Ալեքսեյ անունով, ինչպես ինքն է ներկայացել՝ «տոհմիկ մոսկվացին», գրել էր. «Մենք մոռանում ենք, որ բազմազգ երկրում ենք ապրում, որտեղ դաղստանցիներն ու չեչենները մեր քաղաքացիներն են, որոնք նույնքան իրավունք ունեն զբոսնելու Մոսկվայի կենտրոնով, որքան մենք: Բացի այդ, որեւէ մեկը գիտի՞ արդյոք, որ Սվիրիդովին սպանող կովկասցու կինը ազգությամբ ռուս է»: Ինչեւէ՝ չնայած դեռ Մոսկվայի հատկապես կենտրոնական մասերը, հասարակական տրանսպորտը ոստիկանության, որոնց օգնության է եկել ամբողջ Մոսկվայի նահանգի ոստիկանությանը, եւ ՕՄՕՆ-ի խիստ վերահսկողության տակ են, քաղաքում, դեկտեմբերի 16-ի տվյալներով, ամեն ինչ կարծես հանգստանում է: Ի դեպ, Պետերբուրգում եւս, դեկտեմբերի 15-ին տեղի են ունեցել անկարգություններ, 80 հոգի ձերբակալվել են:

«ՌԻԱ Նովոստի»-ի փոխանցմամբ՝ Մոսկվայի ոստիկանության պետ Վիկտոր Բիրյուկովը հայտարարել է. «Ամեն ինչ նորմալ է, մեզ հաջողվել է քաղաքում կասեցնել խոշոր բախումներ տարբեր խմբավորումների միջեւ, ամեն ինչ մեր վերահսկողության տակ է. մոսկվացիները կարող են հանգիստ լինել»: Եվ վերջում՝ BBC-ի՝ դեմքերի հետ կապված բլոգում 34-ամյա Անաստասիան գրեց. «Դեկտեմբերի 15-ին վերադարձա տուն՝ մետրոյով, ազգայնամոլներ, կովկասցիներ, ոստիկաններ չտեսա, ուշ գիշեր էր: Զարմանում եմ՝ մի՞թե ոչ ոք ամոթ չի զգում՝ ե՛ւ նման ռուս, ե՛ւ նման կովկասցի կոչվելու համար»:

# Լեհական «Էկոտեխ» ընկերությունը կզբաղվի Հայաստանի թունաքիմիկատների գերեզմանոցների վնասազերծմամբ

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի՝ նոյեմբերին Լեհաստան կատարած այցի ընթացքում ստորագրվել էր Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի եւ Լեհաստանի Ազգային անվտանգության բյուրոյի միջեւ համագործակցության համաձայնագիր: Ի կատարումն այդ համաձայնագրի դրույթների՝ Հայաստան է այցելել Լեհաստանի «Էկոտեխ» ընկերության նախագահ Դոմինիկ Վոեւուդկայի գլխավորած պատվիրակությունը:**

**Եռօրյա քննարկումների արդյունքում դեկտեմբերի 16-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության եւ Լեհաստանի Հանրապետության «Էկոտեխ» ընկերության միջեւ: Հուշագրի համաձայն՝ կողմերը պարտավորվում են ծավալել համատեղ ուսումնասիրություններ Հայաստանի տարածքում գտնվող թունաքիմիկատների վնասազերծման, ինչպես նաեւ նոր գերեզմանոցների բացահայտման ուղղությամբ: Առաջնահերթություն կհամարվեն Կոտայքի մարզի Ողջաբերդ բնակավայրի հարեւանությամբ գտնվող Նուբարաշենի թունաքիմիկատների եւ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի հարեւանությամբ գտնվող արսենի միացությունների գերեզմանոցները, քանի որ սրանք լուրջ վտանգ են բնակչության կյանքի եւ շրջակա միջավայրի համար:**

**«Էկոտեխ» ընկերությունը, որը խոշորագույնն է Եվրոմիության տարածքում վտանգավոր նյութերի վերամշակման, թունաքիմիկատների եւ պեստիցիդների ոչնչացման ոլորտում, կիրականացնի ուսումնասիրություններ թունաքիմիկատների գերեզմանոցի տեղակայման եւ դրանում վտանգավոր նյութերի պարունակության որոշման նպատակով, կմշակի թունաքիմիկատների վնասազերծման, վտանգավոր նյութերի վերամշակման եւ չեզոքացման մեթոդներն ու ձեւերը եւ կիրականացնի վերամշակման եւ ոչնչացման աշխատանքները: Կմշակվեն նաեւ թունաքիմիկատների գերեզմանոցի տարածքի վերականգնմանն ուղղված անհրաժեշտ առաջարկություններ եւ միջոցառումներ:**

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

# ՀՌԱՀ-ը շարունակում է իր վնասակար քաղաքականությունը

*1-ին էջից*

**Երեկ ՀՌԱՀ նիստում որոշվեց թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու 1-18 եւ 19-25 մրցութային հայտերի վարկանիշային քվեարկությունը եւ լիցենզավորված անձանց ընտրությունը: Այսպիսով, թիվ 11 մրցույթում «Արմնյուզը» հաղթեց «Ա1+» հեռուստաընկերությանը, իսկ թիվ 8 մրցույթում «Երեւան հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն հաղթեց «ԱԼՄ»-ին: Ի դեպ, հայտարարված երկու մրցույթների համար հայտ է ներկայացրել երկու ընկերություն: Նիստում հաստատվել են 5 հեռուստաընկերությունների ներկայացրած հայտերը հանրապետական սփռման համար: Դրանք են՝ «Արմենիա», «Շանթ», «Հ-2», «Կենտրոն» եւ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունները: Այս հեռուստաընկերությունների օգտին հանձնաժողովի բոլոր 8 անդամները միաձայն 6-ական միավոր են նշանակել, եւ արդյունքում 1-5 մրցույթներում բոլորն էլ 48-ական միավոր են ստացել:**

**Երբ «ԱԼՄ»-ի եւ «Ա1+»-ի լուրը հասավ ԱԺ, պատգամավորներն իրար մեջ սկսեցին քննարկել այդ հարցը: ՀՀԿ փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբյանի կարծիքով, «Ա1+»-ին կապուղի չտրամադրելով եւ «ԱԼՄ»-ին եթերից զրկելով՝ հեռուստադիտողների զանգված են կորցնում: ««Ա1+»-ը եթեր չունի, միայն ինտերնետային էջն է, բայց, իհարկե, քիչ լուրեր չի տալիս: «ԱԼՄ»-ն բավական շատ լուրեր տալիս էր, բայց չգիտեմ ինչո՞ւ մրցույթը չանցավ: Բայց կատարվածում քաղաքական ենթատեքստ չեմ տեսնում: Որպես հեռուստադիտող կուզենայի, որ եթերում երկուսն էլ լինեին: Բախտները չբերեց, ինչ ասեմ», հավելել է ՀՀԿ-ական պատգամավորը:**

**Իսկ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը «Ա1+»-ին եթեր չտրամադրելը միանշանակ քաղաքական որոշում է համարում: «Ա1+»-ին եթեր չտրամադրելը նշանակում է եւս մեկ բան՝ «ազատ խոսքից իշխանությունները ուղղակի սարսափահար են լինում»: Իսկ «ԱԼՄ»-ին եթերից զրկելը՝ պատգամավորը այսպես է ձեւակերպել. «Ներքիմային խնդիր է լուծվել...»: Չնայած հեռուստաընկերությունը «Ժառանգության» հանդեպ կարծես այդքան էլ բարյացակամ չէր, սակայն Ա. Մարտիրոսյանը նշել է, որ ոչ թե բարյացակամ չէր, այլ «մեծածավալ ոչ ճիշտ, ստահոդ ինֆորմացիաներ էր տալիս, բայց ուրախանալու որեւէ առիթ չեմ տեսնում, ցանկացած պարագայում ես կողմ եմ, որ որքան հնարավոր է շատ լրատվամիջոցներ լինեն եւ նրանց ազատությունը միշտ պաշտպանված լինի»:**

**«Ազգը» զրուցեց «ԱԼՄ»-ի ղեկավար Տիգրան Կարապետյանի հետ եւ խնդրեց մեկնաբանել կատարվածը: «Ես պնդում եմ, որ անարդար էր: Անարդար այն առումով, որ մեր փաթեթի բոլոր տվյալները մի քանի անգամ գերազանցում էին «Երեւան» հեռուստաընկերության ներկայացրած փաթեթի տվյալներին: Ակնհայտ էր, որ քաղաքական որոշում է կատարվել եւ այն էլ վերեւից իջեցված հրահանգ, որով էլ ուղղորդվել է հանձնաժողովը: Կամայականությունները այնքան ակնհայտ էին, որ անգամ մեր տվյալները 6 կետով գերազանցում էին (մրցակցին) թե՛ շենքային, թե՛ ներդրումային, թե՛ սարքավորումների եւ այլ առումներով, սակայն հանձնաժողովի անդամները մեզ տվեցին 32 ձայն, իսկ «Երեւան»-ին՝ 40, եւ պարզ դարձավ, որ 2011 թվականի հունվարի 21-ից մենք եթերազրկվելու ենք»:**

**«Ազգի» հարցին, թե ո՞րն է լինելու հաջորդ քայլը, Տիգրան Կարապետյանն ասաց. «Մեր փաստաբանը հավաքելու է բոլոր պահանջվող փաստաթղթերը եւ մենք կդիմենք դատարան: Այսպես չի կարելի եւ այդպես չենք թողնի: Կպայքարենք եւ արդարությունը ջրի երես կհանենք...»:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# 30 մլն դոլար եւ` փոքր եւ միջին բիզնեսի ֆինանսավորման համար

## *«Ամերիաբանկը» պայմանագիր ստորագրեց Եվրասիական զարգացման բանկի հետ*

Երեկ Եվրասիական զարգացման բանկի վարչության փոխնախագահ Մարատ Ջաուքենովը եւ «Ամերիաբանկի» գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը ստորագրեցին պայմանագիր 30 մլն դոլարի վարկային գծի բացման մասին` Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Միջոցները տրամադրվում են 5 տարի ժամկետով եւ Եվրասիական զարգացման բանկի` փոքր եւ միջին բիզնեսին աջակցության ծրագրի շրջանակներում, ֆինանսական հաստատություններին տրամադրվող նպատակային վարկային գծով:

Ինչպես նկատեցին ե՛ւ Հանեսյանը, ե՛ւ Ջաուքենովը, նախագծի իրականացումը կնպաստի Հայաստանում փոքր եւ միջին բիզնեսի կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը եւ զարգացմանը, ներքին եւ արտաքին շուկաներում դրանց մրցունակության բարձրացմանը եւ առհասարակ` շուկայական տնտեսության ենթակառուցվածքային եւ ինստիտուցիոնալ հիմքերի զարգացմանը:

Հաշվի առնելով, որ փոքր եւ միջին բիզնեսը, որի մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմում է մոտ 40 տոկոս, ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար, «Ամերիաբանկը»` որպես իր վարկային քաղաքականության առաջնահերթ ուղղություն է վերցրել դրա վարկավորումը: Իսկ Եվրասիական զարգացման բանկից ստացած վարկը էլ ավելի կօգնի երկրի փոքր եւ միջին ձեռնարկություններին` լուծելու կապիտալ ներդրումների համար անհրաժեշտ երկարաժամկետ ֆինանսավորման խնդիրը. «Նկատելով, որ մեր երկրի փոքր եւ միջին ձեռնարկատերերի շրջանակում կա վարկերի մեծ պահանջարկ, մենք դեռ 2009-ի երկրորդ կեսից սկսեցինք ակտիվորեն ֆինանսավորել այս ոլորտը: Այս նպատակով «Ամերիաբանկը» համագործակցում է 5 միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, եւ միայն անցնող տարվա ընթացքում ոլորտին տրամադրել ենք 30 մլն դոլարի վարկեր` ապահովվելով 600-ից ավելի աշխատատեղեր Հայաստանում: Կոնկրետ Եվրասիական զարգացման բանկից ստացած այս միջոցները մենք վարկերի տեսքով կբաշխենք մինչեւ առաջիկա փետրվար, եւ կարծում եմ, դրանք հասանելի կլինեն հայրենական ձեռնարկությունների համար», ասաց Արտակ Հանեսյանը` հավելելով, որ «Ամերիաբանկի» ընդհանուր վարկային փաթեթի 25 տոկոսն ուղղված է հենց փոքր եւ միջին բիզնեսի ֆինանսավորմանը: Իր հերթին Եվրասիական զարգացման բանկի վարչության փոխնախագահ Մարատ Ջաուքենովը, ընդգծելով, որ սա Հայաստանում իրականացրած իրենց բանկի երկրորդ նմանատիպ նախագիծն է, ասաց. «Ավելորդ է նշել անգամ, որ փոքր եւ միջին բիզնեսի զարգացումը ձեր երկրի համար ռազմավարական կարեւորություն ունի: Մեր բանկից ստացած վարկը կխթանի նաեւ «Ամերիաբանկի» ներդրումային գրավչության աճին, որը հեռանկարում թույլ կտա մեր հայ գործընկերոջը ներգրավել նորանոր արտաքին ներդրողների»:

Հավելենք, որ Եվրասիական զարգացման բանկը ստեղծվել է 2006-ին Ռուսաստանի եւ Ղազախստանի նախաձեռնությամբ: Բանկի հիմնական նպատակն է` մասնակից պետությունների շուկայական տնտեսությունների զարգացումը, նրանց կայուն տնտեսական աճի ապահովումը եւ փոխադարձ առեւտրատնտեսական կապերի ընդլայնումը: Այժմ բանկի մասնակից պետությունները, բացի ՌԴ-ից եւ Ղազախստանից, նաեւ Հայաստանն է, Տաջիկստանը եւ Բելառուսը: Եվրասիական զարգացման բանկի կանոնադրական կապիտալը գերազանցում է 1,5 մլրդ դոլարը:

Հ. Ա.



# Ապակե տարաների գործարան եւ «ՏՏ ոլորտի տարածաշրջանային կենտրոն»

## *Նախագահը այցելեց «Գլաս ուորլդ քամփնի» եւ «Սիներջի»*

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը երեկ այցելեց «Գլաս ուորլդ քամփնի» ընկերության Բյուրեղավանի ապակե տարաների գործարան: Հանրապետության ղեկավարը շրջայց կատարեց գործարանում, ծանոթացավ գործարանի ներդրումային եւ զարգացման ծրագրերին: Լրագրողների հետ զրույցում ընկերության սեփականատեր **Արամ Քոչարյանը** նշեց, որ գործարանը հիմնադրվել է 2004 թ. Արզնու բյուրեղապակու գործարանի հիմքերի վրա: 2004-2006 թթ. այն ամբողջովին վերակառուցվել ու վերազինվել է ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով եւ հոսքագծերով:



PRESS OFFICE OF THE PRESIDENT OF ARMENIA

Ըստ Ա. Քոչարյանի, առաջին արտադրանքը գործարանը տվել է 2006 թ. մայիսին` գործարկված երկու հոսքագծերով` 80 միլիոն ապակյա տարաներ տարեկան արտադրողականությամբ: Այս տարի գործարանում ներդրվել է եւս մեկ հոսքագիծ, ինչի արդյունքում արտադրողականությունը հասել է 120 միլիոն միավոր ապակյա տարաների:

Ա. Քոչարյանի խոսքով, գործարանի արտադրանքի 67 տոկոսն արտահանվում է Ռուսաստան, ԱՄՆ, Կանադա, իսկ մնացած արտադրանքը սպառվում է Հայաստանում: Ըստ նրա, գործարանի վերագործարկմամբ զգալիորեն նվազել է ապակյա տարաների ներկրումը Հայաստան: Գործարանի սեփականատերը միաժամանակ տեղեկացրեց, որ իրենց արտադրանքը մատակարարվում է այնպիսի ճանաչված ընկերությունների, ինչպիսին է «Բորժոմին» (տարեկան` 27 միլիոն շիշ), «Կոկա-կոլան», «Պեպսի-կոլան» (10 միլիոն շիշ), «Բելուգան» (2 միլիոն) եւ այլն:

Ըստ Ա. Քոչարյանի, ընկերությունը նախատեսում է հաջորդ տարվանից նոր ծրագրեր իրականացնել, մասնավորապես` արտադրել ապակե տարաների համար օգտագործվող խցաններ, բարձրորակ պիտակներ, փաթեթավորման նյութեր եւ այլն: Ընդհանուր առմամբ այդ ծրագրերի իրականացման համար կներդրվի 17 միլիոն դոլար:

Երեկ նախագահն այցելեց նաեւ «ՏՏ ոլորտի տարածաշրջանային կենտրոն դարձած» «Սիներջի ինթերնեշնլ սիսթըմզ» (Սիներջի) ընկերության հայաստանյան մասնաճյուղի բիզնես կենտրոնի նորակառույց մասնաշենք: Սերժ Սարգսյանը ծանոթացավ ժամանակակից չափանիշներին համապատասխան կառուցված գրասենյակի պայմաններին, ընկերության ընթացիկ աշխատանքին ու առաջիկա ծրագրերին:

Ն. Մ.

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ**

# Դաշնակցությունը երկու օր բոյկոտեց, կառավարությունը` զիջեց

Դաշնակցության երկօրյա բոյկոտը խորհրդարանում ստիպեց կառավարությանը վերանայել իր դիրքորոշումն է ու դիմել զիջումների:

Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը նախօրեին նամակ է ստացել վարչապետ Տիգրան Սարգսյանից, որտեղ կառավարությունը արտահերթ նստաշրջանի օրակարգում ընդգրկված 5 նախագիծ` 24 օրինագիծ դուրս է հանել: ՀՅԴ խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանի`** «Ճիշտ է, կառավարությունն ավելի հեշտությամբ զիջումների է գնում թուրքերի հետ, քան սեփական խորհրդարանի, բայց շնորհակալ ենք, որ 5 նախագիծ հանվել է» հայտարարությունը արժանացավ ՀՀԿ **Գագիկ Մելիքյանի** կողմից արձագանքին:

«Վրես չգոռաս», հակադարձեց Հովհաննիսյանն ու դրանով ՀՀԿ-ՀՅԴ փոխհրաձգության առաջին ռաունդն ավարտվեց:

«Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ստեփան Սաֆարյանն** էլ առաջարկեց կառավարությանն արտահերթ նստաշրջանից հանել նաեւ աղբահանության, կենսաթոշակների եւ լեզվի օրինագծերը:

«Եթե չհանվի, պայքարի այլ մեթոդի կանցնենք», հավաստիացրեց Սաֆարյանը, ինչին ի պատասխան ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանը** հետաքրքրվեց. «Պայքարի ո՞ր մեթոդի»` միաժամանակ խոստանալով «Ժառանգության» առաջարկությունը փոխանցել կառավարությանը:

«Ժառանգության» պահանջով հայտարարված 20 րոպե ընդմիջումից հետ Վահան Հովհաննիսյանը կրկին ելույթ ունեցավ` նշելով, որ մյուս խմբակցությունները իրենց երկօրյա բոյկոտի իմաստը չեն հասկացել:

«Մենք կարող ենք ցանկացած ֆորմատով ցանկացած օրինագիծ քննարկել, սակայն պատգամավորին հնարավորություն չի տրվում ծանոթանալ օրինագծին եւ առաջարկություն անել: Առաջարկության դեպքում էլ ժամանակն այնքան քիչ է, որ կառավարությունն ուղղակի չի հասցնի ծանոթանալ դրանց: 24 օրինագիծ է դուրս եկել այդ այլանդակ ռեժիմից: Արդյո՞ք պետք էր, որ դրա համար մի ողջ խմբակցություն բոյկոտեր, որ ԱԺ նախագահը բանակցությունների մեջ մտներ կառավարության հետ»:

Այնուհետեւ դաշնակցական մեկ այլ պատգամավոր` **Արծվիկ Մինասյանը** ելույթ ունեցավ` պատգամավորների մի մասին մեղադրելով անտեղյակության մեջ: «Շատերը տեղյակ էլ չեն, թե ինչ են քվեարկում: Կամ փորձում են հաճոյանալ կառավարությանը, կամ էլ վստահում են»:

«Դուք ձեր փոխարեն խոսե՛ք, նման հայտարարությունները կոռեկտ չեն, ձեր եւ ձեր խմբակցության մասին խոսեք», արձագանքեց ԱԺ նախագահը:

Նոր թափ ստացած ՀՀԿ-ՀՅԴ պայքարին միացավ **Էդուարդ Շարմազանովը`** հորդորելով Դաշնակցությանը` հասարակությանն ու գործընկերներին թյուրիմացության մեջ չգցել: «Օրակարգում ներառված 35 նախագծերից 27-ը եղել են ԱԺ օրակարգում եւ հանձնաժողովներում դրական եզրակացություն ստացել», ասաց նա:

Ընդմիջման ժամանակ, սակայն, ՀՅԴ խմբակցության պատգամավոր **Արա Նռանյանը** հերքեց Շարմազանովի հայտարարությունը` հավելելով, որ այն չի համապատասխանում իրականությանը:

Վահան Հովհաննիսյանի մեկնաբանությամբ էլ` կառավարությունը հաճախ է հում եւ «անպատասխանատու» օրինագծեր ներկայացնում, սակայն դրանք չպետք է այս ձեւով քվեարկության դրվեն. խմբակցությունները պետք է կարողանան ծանոթանալ, մարսել այդ օրինագծերը:

«Կառավարությունը շրջանցել է պատգամավորների ու հանձնաժողովների կարծիքները: Դա վիրավորական է»:

Հովհաննիսյանը նշում է, որ եթե կառավարությունը դրական է արձագանքել ու օրենքի 5 փաթեթ դուրս հանել օրակարգից, նշանակում է դրա անհրաժեշտությունը տեսել է:

Նա հավելում է, որ արդեն սովորույթ է դառնում ամանորյա տոների նախաշեմին կամ ամառային արձակուրդներից առաջ կարեւոր նշանակության օրենքներ բերելն ու «սղացնելը»:

Անդրադառնալով խորհրդարանական մյուս ընդդիմության` «Ժառանգության» դիրքորոշմանը, որ չէր միացել բոյկոտին, Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Ժառանգությունը» նրանց մեղադրել է, որ դաշտը թողել են իշխանությանը:

«Բայց արդյունքում մենք հաղթեցինք, իսկ անպատասխանատու ելույթները, որ լսում էինք նաեւ մեր ընդդիմադիր կոլեգաներից` փաստում էր, որ նրանք փորձում էին լեգիտիմացնել այն ինչի դեմ մենք պայքարում էինք»:

Արտախորհրդարանական ընդդիմության վերջերս հնչեցրած տեսակետին էլ, որ ՀՅԴ-ն կեղծ ընդդիմություն է, դրա լավագույն ապացույցը` կուսակցության 120-ամյա հոբելյանին նախագահ Սարգսյանի ներկայությունն էր, Հովհաննիսյանը նախ հայտարարեց, թե իրեն չի հետաքրքրում արտախորհրդարանական ընդդիմության կարծիքը ՀՅԴ-ի մասին: «Նրանց գործից չեմ տեսել, որ իրական ընդդիմություն լինեն: Միայն պրովոկացիա է, որոնց արդյունքում մարդիկ են զոհվում»:

Ինչ վերաբերում է Սերժ Սարգսյանի մասնակցությանը տոնական համերգին` Հովհաննիսյանը ՀՅԴ-ն ներկայացրեց պետության մեջ աշխատող կուսակցություն, «եւ ով էլ լիներ նախագահը, նա պետք է հրավիրվեր: Դա ոչ թե իշխանության, այլ պետության հրավեր էր»:

Հ. Հ.

# Հայաստանը կշարունակի օժանդակել Աֆղանստանում ժողովրդավարության հաստատմանը

«Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում ՀՀ զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված ՆԱՏՕ-ի հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» 2009թ. հոկտեմբերի 19-ին եւ 2009թ. հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման ու հայկական զորախմբի թվակազմի վերաբերյալ համաձայնագիրը երեկ խորհրդարանում ներկայացրեց պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը**: Օրենքի նախագիծը արժանացավ խորհրդարանական բոլոր ուժերի հավանությանը:

Անցյալ տարի ԱԺ վավերացված համաձայնագրով նախատեսվում էր Աֆղանստանում միջազգային անվտանգության ապահովման ուժերի կազմում ընդգրկել 40 հոգուց բաղկացած հայկական զորախումբը: Համաձայնագիրը գործելու էր 12 ամսվա ժամկետով: Ժամկետի ավարտից հետո նախարարությունը ներկայացրեց նախագիծ, որը ենթադրում էր պայմանագրի երկարաձգում եւս 12 ամիս ժամկետով:

«Գերմանական հրամանատարության ներքո գտնվող հայկական զորախմբի համար պայմանավորվածություն է ձեռք բերվել 5 հրահանգիչների օպերատիվ ուսուցման եւ փոխգործողության բազմազգ խմբերի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ: Անհրաժեշտություն է առաջացել եւս 12 ամսով երկարաձգել Աֆղանստանում միջազգային անվտանգության կազմում մեր ստորաբաժանումների մասնակցության ժամկետը, նաեւ կազմը 40 հոգուց հասցնել առավելագույնը 45-ի», օրենքի նախագիծը ներկայացրեց Սեյրան Օհանյանը:

Հ. Հ.

## Վրիժառուները

# Լեգենդար Հակոբ Մելքումովը

## *Էնվերին ոչնչացնող հերոսը*

Լրանում է հայ ժողովրդի արժանավոր զավակներից մեկի՝ Հակոբ Առաքելի Մելքումյանցի (Մելքումով) ծննդյան 125-ամյակը:

Հակոբ Առաքելի Մելքումովը ծնվել է 1885 թվականի դեկտեմբերի 25-ին Լեռնային Ղարաբաղի Խիրխան գյուղում, գյուղացու ընտանիքում: Հոր մահից հետո պատանի Հակոբը մոր հետ տեղափոխվում է Աշխաբադ՝ հորեղբոր մոտ: Աշխաբադում Հակոբն ընդունվում է տեղի արական գիմնազիան, որն ավարտելուց հետո՝1907 թվականին զորակոչվում է ցարական բանակ:

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, Հակոբի զորամասը գտնվում էր Արեւմտյան ռազմաճակատում: Այստեղ նա աչքի է ընկնում քաջությամբ, արժանանում է Գեորգիեւյան խաչի ու մի շարք այլ պարգեւների, եւ, որպես բացառություն, նշանակվում է կազակային հեծյալ դիվիզիայի էսկադրոնի հրամանատար:

Հակոբ Մելքումովը գտնվում էր արեւմտյան ռազմաճակատում, երբ 1918 թ. հունվարին ստացվեց Հայաստանի ուղղությամբ թուրքական զորքերի հարձակման լուրը: Այդ ժամանակ Կովկասի գործերով արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանը դիմում է Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետին՝ խնդրելով թույլ տալ արեւմտյան ռազմաճակատում գտնվող հայ զինվորներից կազմել կամավորական ջոկատներ եւ ուղարկել Հայաստան՝ թուրքերի առաջ շարժվելը կասեցնելու նպատակով:

Շուտով հրապարակվում է ազգությունների ժողկոմ Ստալինի ստորագրությամբ մանդատը հայկական կամավորական ջոկատներ կազմակերպելու եւ Հայաստան ուղարկելու մասին:

Կամավորական ջոկատների կազմակերպման գործը իր վրա է վերցնում Սովետական Ռուսաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Ալեքսանդր Մյասնիկյանը: Վերջինիս աջակցությամբ էլ Ռիգայում գտնվող Հ. Մելքումովը կազմակերպում է ջոկատ, որի մեջ մտան 200 հայ կամավորներ:

Հաղթահարելով ճանապարհի դժվարությունները, Մելքումովի ջոկատը հասնում է Դոնի Ռոստով: Սակայն այդ ժամանակ ճանապարհը դեպի Կովկաս փակել էին Կալեդինի եւ Դենիկինի զորքերը: Այդ պատճառով էլ Մելքումովը որոշում է անցնել Ցարիցին (այժմ՝ Վոլգոգրադ), Կասպից ծովով հասնել Բաքու եւ շարժվել դեպի Հայաստան: Դա եւս չի հաջողվում, որից հետո Հ. Մելքումովն իր ջոկատով մտնում է Կարմիր բանակ: 1918 թ. կոմկուսի անդամ դարձած Մելքումովը նշանակվում է համահավաք հեծյալ բրիգադի հրամանատար եւ մինչեւ 1919 թ. վերջը մասնակցում է հարավային ռազմաճակատում ծավալված գործողություններին:

Թուրքեստանում հակահեղափոխական, բասմաչական ուժերին ջախջախելու գործում վճռական բեկում մտցնելու նպատակով կազմակերպվել էր թուրքեստանյան ռազմաճակատ՝ Մ. Ֆրունզեի հրամանատարությամբ: Հաշվի առնելով, որ Մելքումովը տիրապետում է միջինասիական ժողովուրդների լեզվին, ծանոթ է տեղի պայմաններին, Ֆրունզեի պահանջով 1920 թ. Հ. Մելքումովն ուղարկվում է թուրքեստանյան ռազմաճակատ եւ նշանակվում առաջին հեծյալ բրիգադի հրամանատար:

1920 թ. սկսած բասմաչների հակասովետական ելույթներին զուգահեռ, մեծ ակտիվություն էր դրսեւորում Բուխարայի էմիրը, որի բանակի մեջ էին մտել կովկասյան ռազմաճակատում գերի ընկած եւ Թուրքեստան տեղափոխված մի քանի հազար նախկին թուրք ռազմագերիները:

Բուխարան գրոհող զորքերի մեջ էր նաեւ Մելքումովի առաջին բրիգադը: 1920 թ. օգոստոսի 31-ին՝ համառ մարտերից հետո սովետական զորքերը կոտրեցին հակառակորդի դիմադրությունը եւ մտան Բուխարա:

Բուխարայի ազատագրմանը եռանդով մասնակցելու համար Հ. Մելքումովը եւս պարգեւատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

Բուխարայի նախկին էմիրը, հաստատվելով Դուշանբեում, իր զորքերի թիվը հասցրել էր 15 հազարի եւ անգլիացիների աջակցությամբ փորձում էր վերականգնել կորցրած գահը: Հ. Մելքումովի բրիգադը մասնակցեց էմիրի խոշոր բանակի դեմ ռազմական գործողություններին:

1921 թ. փետրվարի 16-ին Մելքումովը ծանր հարված է հասցնում Դենաուի մոտ դիրքավորված էմիրի բանակին: Ամրանալով Գիսար ամրոցում, հույսը դնելով ամրոցի ամուր պարիսպների վրա, էմիրը դեռ փայփայում էր Մելքումովին դիմադրելու միտքը, սակայն փետրվարի 20-ին խուճապահար փախավ եւ փորձեց ամրանալ Դուշանբեում:

Ի վերջո, իր հարեմը թողնելով Մելքումովի ողորմածությանը, լիովին ջախջախված էմիրը փախչում է Աֆղանստան:

Էմիրի բազմահազարանոց բանակը ջախջախելու համար Մելքումովը պարգեւատրվում է Կարմիր դրոշի 2-րդ շքանշանով:



1921 թ. հոկտեմբերի սկզբին Նարիմանովի աջակցությամբ թուրքական նախկին ռազմական մինիստր, միջազգային ավանտյուրիստ, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը՝ Էնվեր փաշան անցնում է Բուխարա: Նա նպատակ էր դրել անգլիացիների աջակցությամբ Թուրքեստանն անջատել Ռուսաստանից եւ Միջին Ասիայում հռչակել թուրքական պետություն: Կապվելով Աֆղանստանում գտնվող Բուխարայի նախկին էմիրի հետ՝ Էնվերը համախմբում է բասմաչական բոլոր բանդաները եւ ստեղծում 40-հազարանոց բանակ:

Բուխարայի նախկին էմիրը Էնվերին հռչակում է մուսուլմանական զորքերի գլխավոր հրամանատար:

1922 թ. հունվարին, մի շարք հաղթանակներ տանելուց հետո, ոգեւորված Էնվերը սովետական կառավարությանը Նարիմանովի միջոցով ներկայացնում է վերջնագիր՝ պահանջելով սովետական զորքերը դուրս բերել Թուրքեստանից:

Էնվերի ավանտյուրայի լիկվիդացումը ղեկավարելու համար կուսակցության կենտկոմը Միջին Ասիա է գործուղում Գ. Օրջոնիկիձեին: Էնվերի դեմ ռազմական գործողությունների հիմնական ծանրությունը դրվում է Մելքումովի բրիգադի վրա:

«Էնվեր փաշան, - գրել է Հ. Մելքումովը, - սովորական բասմաչական կուրբաշի (հրամանատար. -Վ.Պ.) չէր, որոնց հետ մինչ այդ ինձ վիճակվել էր գործ ունենալ: Զինվորական ակադեմիական կրթությունը, իմպերիալիստական պատերազմի մարտական փորձը եւ վերջապես ուժի վիթխարի գերազանցությունը նրան դարձրել էին վտանգավոր հակառակորդ»:

Բայց Հ. Մելքումովն էլ պակաս փորձ չուներ: «Մենք էլ Էնվերին կջարդենք մեր խելքով», այսպես էր պատասխանել Մելքումովը նոր նշանակում ստանալիս:

Առաջին ծանր հարվածը Մելքումովը հասցնում է Էնվերի բանակի խոշոր բանդաներից մեկին եւ դրանով վերացնում Բուխարա քաղաքի հետ նրա ունեցած կապը: Այս հաղթանակը նկատի ունենալով՝ Գ. Օրջոնիկիձեն Մելքումովին գրել է. «Անսահման ուրախ եմ Ձեր հաջողություններով: Հարկ կլինի Էնվերի դեմ կռվել լրջորեն, բայց վստահ եմ, որ կոլորեք նրա վիզը: Իմ կողմից խոստանում եմ, որքան կներեն ուժերս, օգնել Ձեզ այդ կարեւոր եւ ծանր գործում»:

Այս անհաջողությունից կատաղած, Էնվերը բասմաչական բոլոր զորախմբերի հրամանատարներին ուղարկած հրամանում նշել էր. «Մելքումովն իմ անձնական թշնամին է: Նա ինձ կենդանի է պետք: Ես նրան իմ ձեռքերով ցցին եմ նստեցնելու»:

Հ. Մելքումովն էլ իր հերթին էր հրաման արձակել. «Էնվերին կենդանի բռնել»:

1922 թ. հունիսի 15-ի վաղ առավոտյան Բայսունի մոտ Մելքումովը դեմառդեմ հանդիպում է Էնվերին: Այստեղ Էնվերն իր 17-հազարանոց զորախմբով պատրաստվում էր Մելքումովի զորամասին ծուղակը գցել:

Մելքումովը կարողացել էր կարճ ժամանակում ծանոթանալ կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած Էրզրումի եւ Սարիղամիշի 1914-1915 եւ 1915-1916 թթ. ձմռանը տեղի ունեցած ճակատամարտերի ժամանակ Էնվերի գործողություններին: Էնվերը գերմանական ռազմական դպրոցի հետեւորդ էր, եւ Մելքումովի համար պարզ էր, որ նրա մտահղացումները նույնն էին լինելու: Եվ Մելքումովը չսխալվեց:

Կռահելով Էնվերի նպատակը՝ Մելքումովը կարողացավ շեշակի գրոհով հարկադրել նրան հեռանալ Բայսունից:

Չդիմանալով ճնշմանը՝ Էնվերը հարկադրված նահանջում է դեպի Կոֆրուն: Կոֆրունն անառիկ ամրոց էր, այստեղ Էնվերն իրեն ոչ միայն ապահով էր զգում, այլեւ համոզված էր, որ կջախջախի Մելքումովին: Կռահելով Էնվերի մտադրությունը, չնայած վերջինիս ուժերի գերակշռությանը, Մելքումովը վճռում է չդադարեցնել հարձակումը եւ դահիճին զրկել նոր ուժեր հավաքելու հնարավորությունից:

Մելքումովն Էնվերին ապակողմնորոշելու նպատակով իր զորքերին հունիսի 14-ին «գաղտնի» հրաման արձակեց՝ այնպես առաջ շարժվել, որ հունիսի 19-ին հասնեն Կոֆրուն, միաժամանակ հոգ տանելով, որ այդ հրամանի մասին լուրը հասնի Էնվերին:

Լրտեսների միջոցով տեղեկանալով Մելքումովի հրամանի մասին, Էնվերը համոզվում է, որ վեց օրվա ընթացքում Մելքումովի զորքերը հազիվ Կոֆրուն կհասնեն հոգնած վիճակում, եւ նրանց առանց դժվարության կհաջողվի ոչնչացնել:

Իսկ Մելքումովն իր զորամասերի առջեւ դրել էր խնդիր՝ շարժվել միայն գիշերը, հունիսի 15-ի գիշերը՝ ժամը 3-ին հասնել Կոֆրուն եւ սկսել հանկարծակի գրոհ:

Այդ ժամանակ Էնվերն իր հրամանատարների հետ խրախճանքով էր զբաղված, եւ նրա մտքով չէր անցնում, որ Մելքումովը կհաղթահարեր Պամիրի խոր կիրճերն ու կհասներ Կոֆրուն:

1922 թ. հունիսի 15-ի գիշերը Մելքումովի զորամասը հասավ Կոֆրուն: Սրընթաց գրոհով գրավելով Էնվերի առաջապահ դիրքերը՝ Մելքումովի հեծյալները մտնում են ամրոց: Իսլամական զորքերի գերագույն գլխավոր հրամանատար Էնվերը հանկարծակի գալով, չկարողացավ համախմբել իր ուժերը եւ օգտվելով գիշերվա խավարից, կիսամերկ ու ոտաբոբիկ մի կերպ ճողոպրեց:

Էնվերի ննջարան մտած կարմիր բանակայինները տարբեր կողմերից հավաքում են Էնվերի անձնական իրերը, կնիքը, նոր կարված անգլիական գեներալի համազգեստը, ինչպես նաեւ Էնվերի ստացած նամակները եւ ներկայացնում Մելքումովին:

Երկար ժամանակ այս խայտառակ պարտությունից հետո Էնվերն ուշքի չէր գալիս: Իր բոլոր ուժերը համախմբելով Դուշանբեում՝ Էնվերը որոշում է այստեղ վճռական մարտ տալ Մելքումովի հեծյալ բրիգադին, հաղթել նրան եւ վերականգնել իր «պատիվը»: Նա միաժամանակ օժանդակ ուժեր է ստանում Աֆղանստանում գտնվող Բուխարայի էմիրից:

Կոֆրունից դեպի Դուշանբե ճանապարհն անցնում էր խոր կիրճով: Դրանից էլ օգտվելով, Էնվերը որոշում է Մելքումովին թույլ տալ մտնել կիրճ եւ երկու կողմից շրջապատելով, վերցնել աքցանի մեջ ու ոչնչացնել:

Տեղեկանալով Էնվերի մտադրության մասին, Մելքումովը մշակում է գործողությունների այնպիսի համարձակ պլան, որի ձախողման դեպքում Էնվերը ոչ միայն փրկվելու էր, այլեւ նախաձեռնությունն անցնելու էր նրա ձեռքը:

Մելքումովը որոշեց հուլիսի 17-ին ամեն գնով դուրս գալ Դուշանբեի մոտ եւ գրոհը սկսել ոչ թե գիշերը, այլ ցերեկվա ամենաշոգ ժամին, երբ թշնամին դրան չէր սպասում:

Հուլիսի 17-ին, ցերեկվա ժամը 12-ին, երբ Էնվերի զինվորները շոգից թաքնվել էին տարբեր տեղերում, Մելքումովի հեծյալները սկսեցին հանկարծակի գրոհ: Էնվերի զինվորները չկարողացան ուշքի գալ: Իսկ Էնվերը 300 թուրք հեծյալ սպաների պաշտպանությամբ դուրս եկավ շրջապատումից եւ շարժվեց դեպի Աֆղանստանի սահման:

Այս խայտառակ պարտությունից հետո Էնվերն այլեւս ուշքի չեկավ: Խուսափելով Մելքումովի հետապնդումից՝ Էնվերը անցնում է Բոլջուան, նպատակ ունենալով փախչել Աֆղանստան:

Սակայն այս անգամ էլ նրան ձախողում էր սպասում, այն էլ անդառնալի, վերջնական: 1922 թ. օգոստոսի 4-ին Աֆղանստանի սահմանին մոտ գտնվող Չագան ղշլաղում Մելքումովի բրիգադի մարտիկները շրջապատում են Էնվերի բանդայի մնացորդներին: Մելքումովը տվել էր հրաման՝ թույլ չտալ Էնվերին անցնել սահմանը եւ կենդանի բռնել նրան:

Էնվերի հրամանատարությամբ բանդան կատաղի դիմադրում էր, փորձելով ամեն կերպ ճեղքել շրջապատումը, ճողոպրել դեպի Աֆղանստանի սահմանը: Վերջին պահին Էնվերին հաջողվեց միայնակ, ձիու վրա նստած, սրընթաց մոտենալ սահմանին: Մի քանի րոպե եւ գուցե Էնվերին հաջողվեր անցնել սահմանը: Այլեւս հնարավոր չէր նրան կենդանի բռնել: Եվ Մելքումովի գնդացրորդ Իվան Սավկոն կրակն ուղղում է Էնվերի վրա: Կրակահերթը ձիու հետ գետին է տապալում Էնվերին՝ հինգ տեղից վիրավորված: Նրա բանդայի մնացորդները գերի են հանձնվում: Երբ Մելքումովը մոտենում է Էնվերին, նա արդեն մեռած էր:

Այսպիսի վախճան ունեցավ Էնվերի՝ արյունով ու ոճիրով ծանրացած կյանքը, որը տարվել էր իր տիրակալությամբ միջինասիական թուրքական մեծ պետություն ստեղծելու երազանքով:

Էնվերի 40-հազարանոց կանոնավոր բանակի ջախջախման մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու համար Մելքումովն արժանանում է Կարմիր դրոշի 3-րդ շքանշանին: Նա պարգեւատրվում է նաեւ Բուխարական Սովետական Ժողովրդական Հանրապետության բարձրագույն շքանշանով:

Քաղաքացիական կռիվներից հետո Հ. Մելքումովը շատ էր ցանկանում Հայկ Բժշկյանի նման գալ Հայաստան, մասնակցել Հայկական կարմիր բանակի ստեղծմանը: Սակայն նրան պահեցին Միջին Ասիայում:

1926 թ. սկզբներին անգլիացիներից մեծ օգնություն ստանալով, Էնվերին փոխարինած Իբրահիմ բեկը խոշոր բանդայով անցավ Տաջիկստան, ամենուրեք տարածելով սարսափ, ավերելով ղշլաղները, սպանելով ու թալանելով մարդկանց: Իբրահիմ բեկի դեմ պայքարը կոորդինացնելու համար Տաջիկստան ժամանած Ս. Բուդյոննու առաջարկով Տաջիկստան է մեկնում նաեւ Հ. Մելքումովը, որը ստանձնեց ռազմական գործողությունների ղեկավարումը: Իբրահիմ բեկին գլխովին ջախջախելու համար Հ. Մելքումովն արժանանում է Կարմիր դրոշի 4-րդ շքանշանին:

Ուշագրավ է, որ դատարանում, վերջին խոսքն ասելիս, Իբրահիմ բեկը խնդրում էր իրեն հնարավորություն տալ տեսնելու Յակոբ Տյուրեին՝ Հակոբ Զորավարին, այն մարդուն, որը ջախջախել էր էմիրի, Էնվերի եւ իր զորքերին:

Հակոբ Մելքումովին մեծ համակրանքով էին վերաբերվում ուզբեկները, տաջիկները, թուրքմենները: Իբրեւ հարգանքի նշան նրան անվանում էին «Յակոբ Տյուրե»՝ «Հակոբ Զորավար»:

Մինչեւ այժմ էլ այդ ժողովուրդները սիրով ու հարգանքով են հիշում հայ ժողովրդի արժանավոր զավակ Հակոբ Մելքումովին:

1934 թ. ավարտելով Մ. Ֆրունզեի անվան ակադեմիան, Հ. Մելքումովը նշանակվում է Միջին Ասիայի զինվորական օկրուգի հրամանատարի տեղակալ:

1937 թվական: Հ. Մելքումովը անհիմն զրպարտության հետեւանքով հանվում է պաշտոնից եւ բանտարկվում:

1956 թ. Մելքումովը լիովին արդարացվում է եւ վերադառնում իր ընտանիքի մոտ:

Սովետական բանակի պահեստի գեներալ-լեյտենանտ Հ. Մելքումովը մահացել է 1962 թվականին:

Մոսկվայում Նովոդեւիչի գերեզմանատանը գտնվող նրա շիրիմի վրա ՍՍՀՄ պաշտպանության նախարարության կողմից կանգնեցվել է խիզախ զորահրամանատար, լեգենդար հերոսի հուշարձանը:

1989 թ. Երեւանի քաղաքային սովետի գործկոմի որոշմամբ Հակոբ Մելքումովի անունով է կոչվել Աջափնյակի հիվանդանոցի մոտից մինչեւ Աշտարակի խճուղի ընկած փողոցը: Բայց, ցավոք, 1990-ական թվականների սկզբին, երբ իշխանականներն այնպես հախուռն ոչնչացնում էին ամեն ինչ, մոռացության տրվեց նաեւ Մելքումովի անունով փողոցը: Ոչնչացվել է նաեւ Հակոբ Մելքումովի սխրանքի մասին պատմող վավերագրական կինոֆիլմը:

Չնայած այդ ամենին, այժմ, երբ լրանում է հայ ժողովրդի ականավոր զավակ Հակոբ Մելքումովի (Մելքումյանց) ծննդյան 125-ամյակը, մեր պարտքն ենք համարում հիշել նրան, փրկել նրա անունը մոռացությունից եւ վերականգնել արդարությունը՝ հույս ունենալով, որ դրան ուշադրություն կդարձնեն Երեւանի քաղաքապետարանը եւ ՀՀ պաշտպանության նախարարությունը:

**ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# «Համատեղելիության» եւ «անհամատեղելիության» մասին

Բավական էր, որ խոսվեր Մոսկվայում «Ընդհատված երգը» ֆիլմի նկարահանման մասին, որպեսզի ադրբեջանական մամուլը կրկին շահարկի «էթնիկական անհամատեղելիության» թեման:

Թե ով, երբ եւ որտեղ է ասել, որ «հայերը եւ ադրբեջանցիներն էթնիկապես անհամատեղելի են»՝ հղումներ անելը տվյալ դեպքում կարեւոր չէ. պե՞տք է պնդել, որ «հայերը ֆաշիզմ են քարոզում», եւ Բաքվում իսկույն գտնվում են ամենատարբեր տրամաչափի քարոզիչներ: Ընդ որում, բանը երբեմն հասնում է պարզապես զավեշտի:

Մի ադրբեջանցի լրագրող, մասնավորապես, օրերս լուրջ ոճով վկայակոչել էր Ջալիլ Մամեդկուլիզադեի «Քամանչա» պիեսը, որտեղ ադրբեջանցիներն ազատ են արձակում մի հայ մարդու, որը շրջակայքում հայտնի էր որպես ընդունված քամանչահար: Դեպքը, բնականաբար, տեղի է ունենում անցյալ դարասկզբի ազգամիջյան բախումների տարիներին:

Եթե ամեն ինչ գրականությամբ չափվեր, ապա, թերեւս, մենք հանդուրժողականության մարմնացում պիտի ներկայացնեինք Աբովյանի «Թուրքի աղջիկը»: Բայց հիշեցնենք, որ երբ Ջալիլ Մամեդկուլիզադեն կամ Ջաբար Ջաբարլին պիես էին գրում, Հովհաննես Թումանյանն ամեն ինչ թողած՝ գյուղեգյուղ շրջում եւ հաշտեցնում էր հայերին եւ ադրբեջանցիներին, որի համար հետո ստիպված էր պատասխան տալ ցարական հավատաքննիչներին: Այնպես որ՝ աշխարհը, ցավոք, ոչ Թումանյանով է կառուցվել, ոչ էլ Մամեդկուլիզադեով:

Իրականությունն ավելի բարդ եւ բազմաշերտ է, որպեսզի թաքցվի գրականության, կինոյի «բարալիկ թաղանթի տակ»: Ծագումով ադրբեջանցի կին գրող Բանինը, որ ապրել է Փարիզում, ինքնակենսագրական վեպ ունի՝ «Կովկասյան օրեր»: Նրանում գեղարվեստական քիչ բան կա: Փոխարենը պատմվում է հարուստ նավթարդյունաբերող Միրզա Ասադուլլաեւի ընտանիքի կյանքը: Խոսքը անցյալ դարասկզբի Բաքվի մասին է: Հեղինակը, որ արեւմտյան ազատամտությամբ իրեն կաշկանդված չի զգացել, պատմում է, թե ինչպես իրենք՝ ընտանիքի մանկահասակ աղջիկները տոն օրերին «հայերի ջարդ էին խաղում»: Եվ ոչ ոք նրանց չէր արգելում: Ընդհակառակը, նրա տատը, ինչպես հեղինակն է հիշում, ատելությամբ էր խոսում «անհավատների» մասին, հայհոյում նրանց՝ անվանելով «շան ծնունդ»:

Սա թերեւս իրականին մոտ է: Ինչպես եւ այն, որ հոր՝ միլիոնատեր Միրզա Ասադուլլաեւի բազմաթիվ ծանոթների եւ գործընկերների մեջ հեղինակը չի հիշում այլազգի որեւէ մեկին: Ահա այդ կյանքով էր ապրում ադրբեջանցի բուրժուան անցյալ դարասկզբի Բաքվում, որտեղ բնակչության կեսից ավելին հայեր, ռուսներ եւ եվրոպական այլ ազգությունների ներկայացուցիչներ էին:

Երկու մասից բաղկացած այդ ծավալուն վեպում հեղինակը միայն մի անգամ է հիշատակում հայերին, որ իրենց հարեւանությամբ էին ապրում եւ պատսպարել էին Ասադուլլաեւներին՝ 1918 թ. մարտի քաղաքացիական ընդհարումների ժամանակ: Եվ շատ զարմանալի է, որ կին գրողը չի հիշում իրենց բարերարներից եւ ոչ մեկի անունը: Մինչդեռ կարծես պարտավոր էր:

Ի՞նչ է վկայում այս ինքնակենսագրությունը: Մի բան՝ Բաքվի նույնիսկ զարգացած, այսպես ասած՝ եվրոպականացած խավը, որին պատկանում էր Ասադուլլաեւների ընտանիքը, անցյալ դարասկզբին հայերին համարում էր օտար: Իրականության մեջ շատ քիչ բան է փոխվել խորհրդային իշխանության տարիներին: Ապացո՞ւյց: Միայն մեկը, բայց՝ ամենաբնութագրականը. մահվանից մի քանի ամիս առաջ Նարիմանովը նամակ է հղել Ռուսաստանի կոմկուսի կենտկոմի «հարգելի անդամներին», որով բացահայտ դժգոհում է, թե ինչո՞ւ Ադրբեջանի կուսակցական եւ պետական ղեկավարության մեջ «այդքան շատ հայեր կան»: Նարիմանովը բացառություն չէ: Եթե այդպես լիներ, ապա տեղի չէր ունենա Սումգայիթը: Բաքուն չէր հայաթափվի: Չէր հայրենազրկվի Գանձակի եւ շրջակայքի հայությունը:

Մի երկրում, եթե իշխանությունը չի ցանկանում, ոչինչ հենց այնպես տեղի չի ունենում: Ադրբեջանի հոծ հայությունը բռնատեղահանվել, հայրենազրկվել է իշխանությունների թողտվությամբ, նրա անմիջական ցուցմամբ: Այլ բացատրություն գոյություն չունի: Հուշերի գրքում ՀԿԿ ԿԿ նախկին առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը պատմում է 1988 թ. գարնանը Արարատի շրջանում ադրբեջանցի բնակչության կազմակերպած ցույցի մասին: Որեւէ ադրբեջանցի պաշտոնյա կարո՞ղ է նման մի դեպք հիշել Բաքվում, Կիրովաբադում, Շամխորում, Դաշքեսանում ապրող հայերի նախաձեռնությամբ: Բացառված է:

Ադրբեջանի իշխանությունները, նույն օրերին, երբ Արարատում իրենց ազգակիցները սպառնում էին բզկտել շրջկոմի առաջին քարտուղարին, մահվան սպառնալիքի տակ Բաքվի հայ մտավորականության, իշխանության ստորին օղակներում պաշտոնավարող վերջին մոհիկաններին մղում էին դեպի հեռուստաէկրաններ, թերթերի էջեր, որպեսզի նրանք «դատապարտեն ԼՂԻՄ-ում սկիզբ առած ազգայնականությունը»:

Ահա եւ կարծես պարզ է դառնում, թե ի՞նչ «համատեղելիություն» նկատի ունեն ադրբեջանցի գաղափարախոսները: Բայց դա, ըստ էության, նույն անհամատեղելիությունն է: Քանի որ եթե մարդ չի կարող ասել, որ ինքը պատկանում է այլ ազգության, ունի ինքնուրույն լեզու, մշակույթ, ապա ի՞նչ խոսք կարող է լինել «էթնիկական համատեղելիության» մասին: Համատեղելիությունը երկու եւ ավելի էթնիկ հանրությունների խաղաղ գոյակցությունն է այնպիսի պայմաններում, երբ նրանցից ոչ մեկը մյուսի հանդեպ գերիշխանություն չունի: Իսկ երբ մեկը թելադրում է իր պայմանները, ապա մյուսն արդեն ոչ թե ապրում, այլ ընդամենը... դանդաղ մեռնում է: Դա կոչվում է ուծացում, ասիմիլյացիա:

Ադրբեջանում այդ ճանապարհով են ձուլվել քրդերը, լեզգիները, ուդիները, թաթերը, թալիշները, հրեաների եւ ռուսախոս բնակչության զգալի մասը: Չկան, նրանք բոլորն այսօր ունեն մի անուն՝ «ադրբեջանցի», որն օրենքով իբր քաղաքացիություն է նշում, բայց իրականում հենց էթնիկական անվանում է:

Այն իմաստով, որ հայերը երբեք չեն համաձայնի ենթարկվել ուծացման վտանգի, իսկ ադրբեջանական իշխանությունները չեն հրաժարվում Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ուժի կիրառմամբ «իրավազորություն հաստատելու» գաղափարից, այո՝ այս իրավիճակում հայերը եւ ադրբեջանցիները անհամատեղելի են: Բայց դա էթնիկական անհամատեղելիություն չէ, այլ՝ քաղաքական եւ իրավական: Պարզ ասած՝ հայերս չենք ընդունում, որ ադրբեջանցիները կրկին կարող են լինել «իշխող», մենք՝ «հպատակ»:

Մնացածը զուտ շաղակրատանք է: Ընդամենը՝ էժան քարոզչություն, որ ամեն օր եւ ժամ իրենք իսկ հերքում են: Օրինակներ կարելի է անվերջ բերել, բայց մեկով բավարարվենք. խորհրդարանական վերջին ընտրություններից առաջ ադրբեջանական մամուլում վերստին թեժացավ «կառավարության անդամների մեջ ծպտված հայերի եւ քրդերի» թեման: Հանդուրժողականության եւ էթնիկական համատեղելիության ջատագով երկրին, ընդհակառակը, կիպարտանար, որ կառավարության անդամների մի մասը պատկանում է այլ ազգության, այլ հավատի կրող է: Մինչդեռ մամուլի հրապարակումները հիշեցնում էին վհուկորսի կոչեր: Այնքան, որ իշխանությունները շտապ Մոսկվա գործուղեցին կառավարության անդամին, եւ նա այնտեղ խափանեց իր դստեր եւ մի հայ երիտասարդի ամուսնության գործը: Եվ որեւէ լրատվամիջոցի այդպես էլ չհաջողվեց պարզել այդ նախարարի անունը: Երեւի անվտանգության նկատառումով ստիպված էին չգաղտնազերծել «ուրացողի» ինքնությունը:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# ԱՄՆ-ը դատի տվեց BP-ին

ԱՄՆ-ը դատի է տվել «Բրիթիշ փեթրոլիում» (BP) նավթային ընկերությանը, պահանջելով, որ բրիտանական ընկերությունը անսահմանափակ ֆինանսական պատասխանատվություն կրի Մեքսիկական ծոցում նավթի աղետալի արտահոսքի վնասների եւ վթարի վերացման աշխատանքների ծախսերի համար:

BBC-ն հիշեցնում է, որ 2010-ի ապրիլին BP-ի նավթահարթակի պայթյունից զոհվեց 11 մարդ, իսկ հետո վնասված նավթահորից մի քանի ամիս նավթ էր արտահոսում (մի քանի միլիոն բարել): Դա այդ կարգի խոշորագույն աղետն էր ԱՄՆ պատմության մեջ:



Հայցը հիմնված է ամերիկյան երկու օրենքների խախտման փաստերի վրա: Դրանք են «Նավթային աղտոտումներից պաշտպանվելու մասին» եւ «Մաքուր ջրի պահպանության մասին» օրենքները: ԱՄՆ գլխավոր դատախազ Էրիկ Հոլդերի խոսքերով, հայցվորները կարծում են, որ ապրիլի 20-ի պայթյունի պատճառը անվտանգության տեխնիկայի կանոնների եւ շահագործման նորմերի խախտումներն են:

Նավթի արտահոսքի կապակցությամբ ավելի վաղ 300-ից ավելի քրեական գործ էր հարուցվել Նոր Օռլեանի դատարաններում: Հայցվորները ձկնորսության եւ զբոսաշրջության հետ կապված անհատներ եւ ընկերություններ են, ինչպես նաեւ Մեքսիկական ծոցի մոտ գտնվող ռեստորանների եւ անշարժ կայքի սեփականատերեր:

*ԿԻԵՎ*

# Քրեական գործ Յուլյա Տիմոշենկոյի նկատմամբ



**Ուկրաինայում քրեական գործ է հարուցվել նախկին վարչապետ, «Բատկիվշչինա» ընդդիմադիր կուսակցության առաջնորդ Յուլյա Տիմոշենկոյի նկատմամբ: Այդ մասին հայտարարել է ինքը՝ Տիմոշենկոն գլխավոր դատախազության գլխավոր քննչական վարչությունում հարցաքննվելուց հետո:**

**Ինտերֆաքս գործակալության տվյալներով, նախկին վարչապետին ամբաստանում են ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների վաճառքից Ուկրաինայի ստացած միջոցները վատնելու մեջ: Քննիչները պնդում են, թե այդ փողերը տնտեսական ճգնաժամի ընթացքում հասկացվել են նպաստների վճարմանը:**

**Տիմոշենկոն հերքում է մեղադրանքները: Նրա խոսքերով, կենսաթոշակները վճարվել են, բայց՝ ոչ «բնապահպանական փողերի» հաշվին: «Բատկիվշչինայի» առաջնորդը դատախազության գործողություններն անվանել է «ընդդիմության ահաբեկում»:**

**Գլխավոր դատախազությունում նշում են, որ գործը հարուցվել է «Իշխանության վերազանցում ծանր հետեւանքներով» հոդվածի համաձայն: Տիմոշենկոն խոստացել է Կիեւից չմեկնել: Կոնկրետ մեղադրանքներ դեռ չեն ներկայացվել. Տիմոշենկոն կասկածյալի կարգավիճակում է:**

**«Բնապահպանական» միջոցների ծախսման խախտումների մասին սկսել էին խոսել 2010-ի ապրիլին՝ Տիմոշենկոյի հրաժարականից եւ իշխանափոխությունից կարճ ժամանակ անց: Եթե այն ժամանակ խոսվում էր կառավարության սխալների մասին, ապա այժմ գործ է հարուցվել անձամբ Տիմոշենկոյի նկատմամբ:**

**Քննիչները պնդում են, որ նախկին կառավարության ընդունած մի շարք նորմատիվ ակտեր հակասում են բյուջեին վերաբերող 2009 թ. օրենքի պահանջներին: Դրա հետեւանքով փոխվել է ջերմոցային գազերի քվոտաների վաճառքից ստացված 2,3 մլրդ գրիվնա (288 մլն դոլար) կազմող հատուկ հիմնադրամի ուղղվածությունը:**

**Հետապնդումներ են սկսվել ընդդիմության նաեւ այլ ներկայացուցիչների դեմ: Այսպես, դեկտեմբերի 14-ին ձերբակալվել է շրջակա միջավայրի պահպանության նախկին նախարար Գեորգի Ֆիլիպչուկը: «Կոմերսանտ-Ուկրաինա» թերթի տվյալներով, նրան նույնպես կասկածում են հիշյալ միջոցների ոչ նպատակային ծախսումների մեջ:**

**Նույն գործով հարցաքննության է կանչվել նախկին փոխվարչապետ, «Բատկիվշչինայի» առաջնորդի տեղակալ Ալեքսանդր Տուրչինովը:**

# Արաբական լիգան պահանջում է Պաղեստին՝ 1967-ի սահմաններով

**Արաբական պետությունների լիգայի արտգործնախարարները, Կահիրեում քննարկելով պաղեստինաիսրայելական հաշտության բանակցությունների վերսկսման հնարավորությունները, հրապարակել են համատեղ հայտարարություն: Փաստաթղթում ընդգծվում է, որ բանակցությունները կարող են վերսկսվել հակամարտության դադարեցումը երաշխավորող «լուրջ առաջարկության» առկայության դեպքում:**

**Լիգայի նախագահ Ամր Մուսան ԶԼՄ-ներին հայտարարել է, որ արաբ արտգործնախարարները բանակցությունների անարդյունավետության պատճառը համարում են «Իսրայելի եւ ԱՄՆ-ի դիրքորոշումները»:**

**Արաբական լիգայի դիտորդական հանձնաժողովի ներկայացուցիչները Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասի հետ քննարկել են իրենց հետագա քայլերը, հաղորդում է BBC-ն:**

**Միեւնույն ժամանակ նշվում է, որ ԱՄՆ Կոնգրեսի ստորին պալատը երեկ ընդունած բանաձեւով դատապարտել է միակողմանիորեն անկախ պետություն հռչակելու պաղեստինցիների փորձերը: «Քոլ Իսրայել» ռադիոկայանը ընդգծում է, որ բանաձեւը կրում է սոսկ հանձնարարական բնույթ:**

**Արաբական լիգան, սակայն, Վաշինգտոնից ակնկալում է ապագա պաղեստինյան պետության սահմանների հստակություն: Պաղեստինի պետության մեջ պետք է ներառվեն Արեւելյան Երուսաղեմը, Հուդան, Սամարիան, Գազայի հատվածը, որոնք Իսրայելը բռնակցեց 1967-ի պատերազմի արդյունքների հիման վրա:**

# ՄԱԿ-ը վերացրեց հակաիրաքյան պատժամիջոցները

**ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը չեղյալ է հայտարարել Սադդամ Հուսեյնի օրոք Իրաքի դեմ ձեռնարկված մի շարք սահմանափակիչ պատժամիջոցներ: Բաղդադն այսուհետեւ կարող է ձեռք բերել քիմիական եւ մանրէական զենք, ինչպես նաեւ հեռահար հրթիռներ:**

**Բացի դրանից, վերացվել են խաղաղ միջուկային էներգետիկայի զարգացման սահմանափակումները: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ Ան ընդունած երեք բանաձեւերի շնորհիվ Իրաքն այլեւս ենթակա չէ ՄԱԿ-ի կանոնադրության VII հոդվածին, այսինքն չի սպառնում խաղաղությանն ու անվտանգությանը:**

**Ան նիստն անցկացվել է ԱՄՆ-ի նախաձեռնությամբ եւ այդ երկրի փոխնախագահ Ջո Բայդենի նախագահությամբ: Բանաձեւերի ընդունման նպատակով աշխատանք էր կատարվել վերջին երկու ամիսներին:**

# Գանան սկսել է նավթի առեւտրային արդյունահանում

**Բրիտանական Tullow Oil նավթային ընկերության հիմնած կորպորացիան Գանայի ափերի մոտ, երկրի պատմության մեջ առաջին անգամ սկսել է նավթի առեւտրային արդյունահանում:**

**Գանայի ափամերձ ջրերում նավթի ու գազի հանքավայրեր հայտնաբերվել էին երեք տարի առաջ: Նախնական գնահատումների համաձայն, երկրի նավթի երկու խոշորագույն հանքավայրերի պաշարները կազմում են մոտ 3 մլրդ բարել:**

**Ափից 60 կմ հեռավորության վրա նավթահարթակ է գործարկվել Jubilee Field հանքավայրում: BBC-ն հաղորդում է, որ գործարկման պաշտոնական արարողությանը մասնակցել է երկրի նախագահ Ջոն Աթա Միլզը:**

**Սկզբնական շրջանում Tullow Oil-ը կարդյունահանի օրական 55 հազար բարել նավթ, իսկ կես տարի հետո այդ ցուցանիշը կհասցվի 120 հազար բարելի:**

**Գանայի կառավարությունն ակնկալում է առաջին տարում նավթահանույթից ստանալ 400 մլն դոլար, իսկ հետագայում տարեկան շահույթը կարող է կազմել 1 մլրդ դոլար:**

**Ավելի վաղ Գանայի հանքավայրերին տիրանալու փորձ էր արել ռուսական «Լուկօյլ» ընկերությունը:**

## Մշակույթ

# «Արվեստի մեջ կան նաեւ անփոխարինելի մարդիկ»

### Կարծում է Էդուարդ Թոփչյանը

Տարեվերջին տարբեր բնագավառների ներկայացուցիչներն անդրադառնում են տարվա ընթացքում իրենց ձեռքբերումներին ու բացթողումներին: Այնպես որ, մինչեւ Ամանոր այս թեմայով անթիվ-անհամար ասուլիսներ են կազմակերպվելու: Երեկ «Հայելի» ակումբի հյուրերն էին Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Էդուարդ Թոփչյանը** եւ նվագախմբի տնօրեն **Ռուզան Սիրունյանը**: Թեեւ նվագախմբի համար ամբողջական տարի է համարվում է սեպտեմբերից մինչեւ հաջորդ տարվա օգոստոս ընկած ժամանակը, այնուամենայնիվ Էդուարդ Թոփչյանը փորձեց հիշել հունվարից մինչեւ երեկ կատարվածը: Խոսելով ձեռքբերումներից՝ Է. Թոփչյանը կարեւորեց հատկապես իսպանացի տենոր Պլասիդո Դոմինգոյի ելույթը պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ. «Նա շատ սիրեց մեր նվագախումբը, եւ նրա կարծիքը մեզ համար, հատկապես ինձ համար շատ կարեւոր է»: Ձեռքբերումներից հետո Էդուարդ Թոփչյանը խոսեց խնդիրներից, նրա խոսքով՝ հիմնական խնդիրը ֆինանսական միջոցներն են, ինչի պատճառով էլ երաժիշտները սկսել են հեռանալ Հայաստանից. «Կոնկրետ մեր նվագախմբից չստացված երաժիշտների ենք կորցնում, բայց նրանք տխրությամբ են հեռանում»: Է. Թոփչյանն ասում է, որ Հայաստանից երաժիշտների հեռանալը մի պահ դադարել էր, բայց հիմա նորից... Ճիշտ է, Էդուարդ Թոփչյանը դժգոհում է, բայց միաժամանակ նշում. «Ես շատ բարձր խոսելու իրավունք չունեմ, քանի որ մենք նույնիսկ նախագահից հովանավորություն ունենք»: Մաեստրոն չի համաձայնում այն կարծիքին, թե անփոխարինելի մարդիկ չկան. «Ժամանակն է հասկանալու, որ Հայաստանում կան անփոխարինելի մարդիկ, հատկապես արվեստի մեջ, եւ ամեն մեկին կորցնելով՝ մի տասնամյակ ենք կորցնում»:


ՖՈՏՈԼՈՒՐ

Է. Թոփչյանը կարծում է, որ երգչախմբերը երգիչներով կհամալրվեն. «Ի վերջո, ամբողջ ազգը երգում է: Դերասաններ էլ միշտ կլինեն, սակայն երաժիշտ պատրաստելու համար 18 տարի է հարկավոր: Պետությունը գումարներ է ներդնում, երաժիշտները սովորում են ու գնում զարդարելու եվրոպական որեւէ նվագախումբ»: Մաեստրոն կարծում է, որ պետք է միջոցներ ստեղծել ու երաժիշտների աշխատավարձերը համապատասխանեցնել եվրոպական թեկուզ ցածր չափորոշիչներին. «Եթե կորցնենք այս երաժիշտներին, առաջիկա 50 տարիներին այդպիսիներին էլ չենք ունենա»:

Հարցին, թե պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի երաժիշտն ինչքա՞ն աշխատավարձ է ստանում, Էդուարդ Թոփչյանը պատասխանեց. «Միջինը՝ 500 դոլար, դրա համար էլ ասում եմ՝ բարձր խոսելու իրավունք չունեմ», բայց եթե երաժիշտը արտասահմանից 2500-3000 դոլար աշխատավարձով հրավեր է ստանում, պարզ միշտ չէ, որ նա նախընտրում է Հայաստանը, եւ այդպես կորցնում ենք մեր լավագույն երաժիշտներին: «Աշխարհում միայն հայ երաժիշտներով կարող են 3-4 նվագախումբ հավաքել», ասում է Է. Թոփչյանը եւ ընդգծում. «Առանց արվեստ երկիր չի լինում: Մի կողմից մեր երկրի ուշադրությունից անչափ շնորհակալ եմ, բայց մեր երկրի օլիգարխները, որոնք ատում են Մոցարտին ու սիրում Գարուշիկին, պետք է շարժվեն իրենց տեղերից»:

Պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի PR-ի վերաբերյալ Էդուարդ Թոփչյանը նշեց, որ Կարելի է փորձել PR անել եւ դահլիճ բերել անտեղյակ մարդկանց. «Իմ նախորդն այդպես արեց, բայց տեսանք, որ դա արդյունք չի տալիս»: Ռուզան Սիրունյանն ավելացնում է, որ նման դեպքերում համերգներին ուսանողներ են գալիս, որոնք խոսում են, խանգարում կողքիններին. «Երբեմն հսկիչները ստիպված են լինում նրանց դուրս հրավիրել»: Էդուարդ Թոփչյանը կարծում է, որ պետք է նոր սերունդ ստեղծել եւ կրթել. «Իսկ մեր երաժշտական դպրոցների ու կոնսերվատորիայի վարած քաղաքականությանը ես չեմ հավատում: Օրինակ՝ Սայաթ-Նովայի անվան դպրոցը չգիտեմ ինչի է վերածվել, խոռի կենտրո՞ն է, ի՞նչ է»:

Ասուլիսը մի տեսակ հոռետեսական տրամադրության մեջ անցավ, սակայն Էդուարդ Թոփչյանն իրեն հոռետես չի համարում, ասում է, որ լավատես է, բայց միաժամանակ նաեւ իրատես:

**Ի. Պ.**

# Ազգային կինոկենտրոնն ամփոփեց 2010 թվականը

Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն **Գեւորգ Գեւորգյանը** երեկ անդրադարձավ 2010 թվականի իրենց ձեռքբերումներին: Ամփոփիչ ասուլիսը հրավիրվել էր Ազգային կինոկենտրոնում: Գեւորգ Գեւորգյանի կարծիքով՝ իրենց համար տարին հաջող ավարտ է ունենում: Կինոկենտրոնը կազմակերպել եւ իրականացրել է մի շարք կինոծրագրեր՝ ուղղված ազգային կինոյի պահպանմանն ու տարածմանը: «Մեր հիմնական ծրագրերից մեկը կինոֆիլմերին աջակցելու ծրագիրն է», նշեց Գեւորգ Գեւորգյանը: Կինոկենտրոնը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել համատեղ արտադրությամբ նկարահանվող ֆիլմերին եւ հայկական ֆիլմերը ներկայացրել միջազգային կինոփառատոների մրցութային ծրագրերում: «Տարվա կեսից էլ նախաձեռնեցինք «Կինոաշունը», որը լայն արձագանք ստացավ», ավելացրեց կինոկենտրոնի տնօրենը: «Կինոաշունը»՝ ազգային կինոյի ամիս ծրագիրը, այս տարի առաջին անգամ էր կազմակերպվում, բայց այսուհետեւ հոկտեմբերը կդառնա ազգային կինոյի ամիս, եւ ամեն տարի մեկ ամիս շարունակ հայկական ֆիլմեր կցուցադրվեն: Այս կինոնախագիծը նպատակ ունի վերականգնելու հայկական ֆիլմերի ցուցադրության ավանդույթը: Միայն սոցիալական կայքերում շուրջ 30 հազար այցելուներ ծանոթացել ու հետաքրքրվել են ֆիլմերի ցուցադրությամբ: Այս տարի կինոկենտրոնը նաեւ թողարկել է Խորեն Աբրահամյանի, Մհեր Մկրտչյանի եւ Ռոբերտ Սահակյանցի ֆիլմերից 500-ական DVD-ները: Գեւորգ Գեւորգյանը տեղեկացրեց, որ բացի կինոփառատոներից մասնակցել են նաեւ Կաննի ու Մոսկվայի կինոշուկաներին. «Կարծում եմ՝ Մոսկվայի կինոշուկան հաջող չէր մեզ համար»: Մասնակցությունը Կաննի կինոշուկային Գեւորգ Գեւորգյանն ավելի հաջող գնահատեց.«Արդեն 2-րդ տարին էր, որ մասնակցում էինք Կաննի կինոշուկային, որի շնորհիվ այսօր առաջարկ ունենք անիմացիոն լիամետրաժ 3D համակարգով ֆիլմ արտադրելու: Այդ ուղղությամբ հիմա բանակցություններ են տարվում հնդկական մի ընկերության հետ: Կարծում եմ մյուս տարի կսկսենք մեր առաջին անիմացիոն լիամետրաժ 3D համակարգով ֆիլմի արտադրությունը»:

Գեւորգ Գեւորգյանը տարեվերջին լավատեսորեն էր տրամադրված, ասաց, որ կինոարտադրության մեջ ինչ-որ չափով տեղաշարժ կա. «Փորձում ենք ներգրավել նաեւ երիտասարդներին: Նրանց մասնակցությամբ կինո նոր շունչ ու նոր որակ կստանի»: Կրկին անդրադառնալով ցուցադրություններին՝ բանախոսն ասաց, որ պետք է ներգրավել նաեւ մարզերն ու համայնքները: «Մարզպետների հետ մարզերում պետք է կարողանանք ստեղծել կենտրոններ եւ դահլիճներ, որտեղ հնարավոր լինի պարբերաբար ֆիլմեր ցուցադրել»: Ազգային կինոկենտրոնի հիմնական նպատակներից է կինոն հասանելի դարձնել հանրությանը եւ կինոյի միջոցով փոխել մարդկանց մտածելակերպը:

2011 թվականին եւս Ազգային կինոկենտրոնը տարբեր ծրագրեր է իրականացնելու. հրատարակելու է թերթ, տարեվերջին ազգային կինոյի մրցանակաբաշխություն է իրականացնելու, ընդլայնելու է «Կինոաշուն ծրագիրը»: Տարվա ընթացքում նաեւ հատուկ ծրագիր է պատրաստվելու Հայաստանի անկախության 20-ամյակի կապակցությամբ:

**Ի. Պ.**

**ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ**

# Հայտնի դարձան հանրապետական ասմունքի փառատոնի հաղթողները

**ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո անցկացվող «Հանրապետական ասմունքի մանկապատանեկան 2-րդ մրցույթ փառատոնը», որը նվիրված էր հայ անվանի բանաստեղծ Վահան Տերյանի 125-ամյակին, անցկացվում էր ՀՀ մշակույթի նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ՝ ԱԺ-ի «Բաց դռներ» ծրագրի շրջանակներում: Առաջին փառատոնին հանրապետության բոլոր մարզերից, Ջավախքից եւ Արցախից մասնակցել էին 6000 դպրոցականներ, իսկ այս երկրորդին նրանց գրականության հավաքածուի: Գլխավոր մրցանակի արժանացավ Կոտայքի մարզի Բալահովիտի միջն. դպրոցի սան, 15-ամյա Սերինե Մկրտչյանը՝ ԱԺ նախագահից ստանալով հատուկ դիպլոմ եւ notbook: ԱԺ նախագահին՝ նման կարեւոր փառատոն անցկացնելու համար շնորհակալական խոսք ասաց պատգամավոր Տաճատ Վարդապետյանն ու նշեց, որ այն մեծ նշանակություն է ունենում հայ պոեզիայի զարգացման գործում: Հովիկ Աբրահամյանը եւս մեկ անգամ շնորհավորեց 18 մրցանակակիրներին,**



**թիվը հասավ 21 հազարի: Նշենք, որ փառատոնի ժյուրիի պատվավոր նախագահն էր ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ժյուրիի նախագահը ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանը, անդամներ՝ բան. գիտ. թեկնածու Կարո Վարդանյանը, գրող-հրապարակախոս Ռազմիկ Դավոյանը, ՀՀ ժող. արտիստ Գուժ Մանուկյան, Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ Գայանե Սողոմոնյանը, ֆիզմաթ գիտ. թեկնածու լրագրող Գրիգոր Էմին-Տերյանը, արվեստագիտության թեկնածու Վաչե Հովսեփյանը, փառատոնի պատասխանատու քարտուղար Մարիետա Մակարյանը, պատգամավորներ Տաճատ Վարդապետյանը, Կարինե Աճեմյանը, Արտակ Զաքարյանը եւ այլք:**

**Երեկ երեկոյան Սունդուկյանի անվ. մայր թատրոնում կայացավ փառատոնի գալա-համերգը, որի ընթացքում եզրափակիչ փուլ դուրս եկած 80 ասմունքողներից 18-ը արժանացան ԱԺ նախագահի դիպլոմներին, շնորհակալագրերին: Համակարգիչներ, տնային կինոթատրոններ, հեռուստացույցներ ԱԺ նախագահը հանձնեց 1-3-րդ մրցանակային տեղեր գրավածներին, իսկ 11 խրախուսական մրցանակակիրները եւ 6-ամյա Բենիկ Ասլանյանն արժանացան տեսաձայնագրիչների եւ շնորհակալություն հայտնեց բոլոր աջակիցներին ու ժյուրիին՝ փառատոնը հավուր պատշաճի անցկացնելու համար ու նշեց. «Ուրախ եմ ու հպարտ, որ ասմունքի փառատոնը կայանում է արդեն երկրորդ տարին՝ իր շուրջը համախմբելով 21 հազար հայ պոեզիայի նվիրյալների: Կազմակերպելով այս փառատոնը, մենք կարողացանք մասադ սերնդի մոտ սեր սփռել, նրանց ուշադրությունը սեւեռել դեպի հայ պոեզիան: Հենց այս սերունդն է, որ պետք է միանա ու մեզ հետ մասնակիցը լինի մեր երկրի կառուցմանն ու բարգավաճմանը: Ուստի այդ գործում մեծ դեր ունեն հատկապես մեր մանկավարժները, հայոց լեզվի ուսուցիչները, որոնց էլ կրկին հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը»: Պրն Աբրահամյանը խոստացավ շարունակել մինչեւ իր պաշտոնավարության ավարտը՝ հույս հայտնելով, որ իրենից հետո փառատոնը կշարունակվի նաեւ հաջորդ ԱԺ նախագահի օրոք:**

**Միջոցառմանը ներկա էին Նավասարդ սրբազանը, փոխքաղաքապետ Կամո Արեյանը պաշտոնատար այրեր, պատգամավորներ, մարզպետներ, հյուրեր: Ողջ երեկո Տերյանի շունչն ու հոգին թեւածում էին բեմում, հնչում էին նրա ստեղծագործությունները, գրողի տողերով գրված երգեր ու տարածվում Երեւանից մինչեւ մարզեր, մինչեւ Ջավախք ու Արցախ:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Գրական փառատոն Մարսելում

**Ֆրանսիայի Մարսել քաղաքում դեկտեմբերի 11-ին տեղի ունեցավ «Հայերեն գիրք 2010» Անրի Վեռնոյի անվան միջազգային գրական փառատոնը, որին մասնակցել են աշխարհի տարբեր երկրներում ստեղծագործող հայ արձակագիրները, դրամատուրգները, ակադեմիկոսներն ու պրոֆեսորները: Փառատոնի նախագահը եղել է ֆրանսիական հեղինակավոր TF1 հեռուստաընկերության ղեկավար Շառլ Վիլնյուվը, այն անցկացվում է երկու տարին մեկ անգամ: Այս տարի որպես տարվա լավագույն գրող փառատոնի «Մեսրոպ Մաշտոց» մրցանակին արժանացել է երիտասարդ արձակագիր Արեգ Ազատյանը:**

# Տեղի կունենա «Հայաստանի գրադարանային ցանցի վերազինում» նախագծի շնորհանդեսը:

**Դեկտեմբերի 20-ին «Կոնգրես» հյուրանոցում տեղի կունենա «Հայաստանի գրադարանային ցանցի վերազինում» նախագծի շնորհանդեսը: Այս տարի լրանում է «Հայաստանի գրադարանային ավտոմատացված ցանցի ստեղծում» նախագծի 10 տարին, որի նախաձեռնողը եղել է «Բաց հասարակության ինստիտուտը»: Ամսի 20-ին՝ շնորհանդեսի ժամանակ ներկայացվելու են 10 տարիների ընթացքում նախագծի ունեցած նվաճումներն ու զարգացումները:**

**Ի. Պ.**

# Երկրորդ խաղափուլի ձախողումը ճակատագրական եղավ




Բասկետբոլի կանանց Եվրոպայի գավաթի խաղարկության 1/16 եզրափակիչում երեկ «Հասիսը» սեփական հարկի տակ համառ մրցապայքարում 57-62 հաշվով պարտվեց Ռուսաստանի ուժեղագույն թիմերից մեկին՝ Մոսկվայի «Դինամոյին»: Հանդիպման նման արդյունքի վրա վճռորոշ ազդեցություն ունեցավ 2-րդ խաղափուլում մեր բասկետբոլիստուհիների չափազանց անհաջող խաղը:

Հաշվետու խաղի նախօրեին «Հասիսի» կազմը համալրել էր թիմի նախկին ավագ Բոյանա Վուլիչը, որի ներկայությունը ոգեւորել էր թիմակիցներին: «Հասիսը» շատ հաջող սկսեց հանդիպումը: Գանա Զարիցկայի եւ Աննա Պոկոյովայի դիպուկ նետումների շնորհիվ «Հասիսն» առջեւում էր 5-0 հաշվով: Սակայն հյուրերին շատ արագ հաջողվեց հաշվի մեջ առաջ անցնել՝ 7-5: Առաջին խաղափուլում հիմնականում հավասար պայքար ընթացավ: Դինամոյականներին հաջողվեց խաղափուլը շահել 2 միավորի տարբերությամբ (19-17):

2-րդ խաղափուլում դաշտի տերերի խաղը լրիվ կազմալուծվեց: «Հասիսն» անճանաչելի էր դարձել: Ոչ մի կերպ չէր հաջողվում միջին կամ հեռու տարածություններից գնդակն ուղարկել զամբյուղը: Դաշտի տերերը պարզապես տապալվեցին՝ միայն 3 միավոր վաստակելով տուգանային նետումների շնորհիվ: Իսկ ահա հյուրերը միավորների տարբերությունը հասցրին 16-ի (36-20)՝ չափազանց դժվարին կացության մեջ դնելով «Հասիսին»:

Ի պատիվ հասիսցիների, նրանք չհուսահատվեցին եւ վերագտնելով խաղը, հաջորդ երկու խաղափուլերում կրկին աչքի ընկան դիպուկ նետումներով ու կազմակերպված գործողություններով: Դրանց արդյունքում «Հասիսը» շահեց վերջին երկու խաղափուլերն էլ (16-12, 21-14): Սակայն 2-րդ խաղափուլի ձախողումը ճակատագրական եղավ թիմի համար, որն ի վերջո մրցակցին զիջեց 5 միավորի տարբերությամբ:

Այս խաղում «Հասիսի» կազմում արդյունավետությամբ աչքի ընկավ Գանա Զարիցկան՝ վաստակելով 18 միավոր: Աննա Պոկոյովան թիմին 13 միավոր պարգեւեց, Բոյանա Վուլիչը՝ 8: Հյուրերից ամենաարդյունավետը Նատալյա Մարչանկան էր, որը 12 միավոր վաստակեց:

Պատասխան խաղից առաջ թեեւ «Հասիսը» հայտնվել է ծանր իրավիճակում, սակայն չպետք է հուսահատվի: Հարկավոր է փորձել դեկտեմբերի 22-ին Մոսկվայում կայանալիք պատասխան խաղում հետ բերել կորցրածը:

# «Մազեմբեն» անակնկալ մատուցեց



Աբու Դաբիում ընթացող ֆուտբոլի աշխարհի թիմային առաջնությունում մեծ անակնկալ մատուցեց Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության «Մազեմբե» թիմը, որը կիսաեզրափակիչում 2-0 հաշվով առավելության հասավ բրազիլական «Ինտերնասիոնալի» նկատմամբ: Աշխարհի թիմային առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ Աֆրիկայի ներկայացուցիչը իրավունք ստացավ վիճարկելու չեմպիոնի տիտղոսը:

«Սա պարզապես անհավանական է: Մենք եկել էինք աֆրիկյան ֆուտբոլի պատիվը պաշտպանելու ու դա մեզ հաջողվեց: Կարծում եմ, որ ողջ Աֆրիկան հպարտանում է մեզանով: Պետք է խոստովանեմ, որ մարզական բախտը մեր կողմն էր, քանի որ մրցակիցը չկարողացավ գոլային պահերն իրացնել: Սակայն մեր դարպասապահն էլ հիանալի խաղաց: Այս օրը ամենաերջանիկն է ինձ համար: Մենք մեծ նվաճման հասանք: Ֆուտբոլիստներն ապացուցեցին, որ բարձրակարգ խաղ կարող են ցուցադրել», խաղից հետո հայտարարել է «Մազեմբեի» գլխավոր մարզիչ Լամին Ն՛Դիայը:

«Շատերը սպասում էին, որ եզրափակիչում կմրցեն մեր թիմն ու «Ինտերը»: Մենք հասկանում էինք, որ առաջին խաղն ամենադժվարինն է լինելու: Գրեթե ողջ խաղի ընթացքում առավելություն ունեինք, սակայն չիրացրինք գոլային պահերը: «Մազեմբեն» արժանի հաղթանակ տոնեց: Աֆրիկյան ֆուտբոլը մեծապես առաջադիմում է: Ուստի մրցակցի հաղթանակը զարմանալի չէր», նշել է «Ինտերնասիոնալի» գլխավոր մարզիչ Սելսո Ռոտը:

Իսկ ահա Եվրոպայի չեմպիոնների գավաթակիր Միլանի «Ինտերը» հաստատեց իր բարձր կարգը՝ 3-0 հաշվով պարտության մատնելով Հարավային Կորեայի «Սոնամ Իլվա Չունմային»: Արդեն 3-րդ րոպեին Ստանկովիչը բացեց հաշիվը, իսկ մինչեւ ընդմիջում Զանետին 2-րդ գոլը խփեց: 2-րդ խաղակեսում Միլիտոն ավարտեց մրցակցի ջախջախումը:

# Բարեգործական հերթական խաղը

Պիրեյի «Գեորգիոս Կարաիսկակիս» մարզադաշտում կայացավ ֆուտբոլի բարեգործական հանդիպում հունական «Օլիմպիակոսի» եւ համաշխարհային ֆուտբոլի «աստղեր» Զինեդին Զիդանի ու Ռոնալդոյի կազմավորած թիմի միջեւ: Ինչպես ընդունված է նման կարգի մրցախաղերում, հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 2-2: «Աստղերի» թիմից 2 գոլ խփեց պորտուգալացի 38-ամյա հարձակվող Սա Պինտոն: «Օլիմպիակոսից» նույնպիսի արդյունքի հասավ Կոնստանտինոս Միտրօղլուն:

Բացի Զիդանից ու Ռոնալդոյից, «աստղերի» թիմում հանդես եկան Ռոնալդ դե Բուրը, Քրիստիան Կարամբյոն, Ջովանի վան Բրոնկհորստը, Նունո Գոմեշը եւ այլ անվանի ֆուտբոլիստներ: Զիդանն ու Ռոնալդոն ՄԱԿ-ի զարգացման ծրագրի բարի կամքի դեսպաններ են եւ բարեգործական հանդիպումների կազմակերպման շնորհիվ ֆինանսական միջոցներ են հավաքում Հաիթիում եւ Պակիստանում տարերային աղետներից տուժածներին օգնելու համար:

# Դեշամը լավագույնն է

**«Մարսելի» մարզիչ Դիդյե Դեշամը ճանաչվել է 2010-ի Ֆրանսիայի լավագույն մարզիչ: «Ֆրանս ֆուտբոլի» անցկացրած հարցման արդյունքներով երկրի ազգային հավաքականի նախկին ֆուտբոլիստը գերազանցեց «Օսերի» մարզիչ Ժան Ֆեռնանդեսին եւ Ռենե Ժիրարին («Մոնպելյե»): 1992/93-ին Դեշամը «Մարսելի» թիմի ավագի կարգավիճակում նվաճել էր չեմպիոնների գավաթը: Դրանից հետո թիմը 17 տարի ոչ մի մրցանակի չէր արժանացել: Եվ ահա Դեշամի գլխավորությամբ «Մարսելը» նվաճեց երկրի չեմպիոնի եւ գավաթակրի տիտղոսները: Դեշամը 2-րդ անգամ ճանաչվեց տարվա լավագույն մարզիչ: Առաջին անգամ նա լավագույնն էր ճանաչվել 2003-ին, երբ Դեշամը գլխավորում էր «Մոնակոն»:**

**«Ինձ համար մեծ պատիվ է մրցանակին արժանանալը: Հարկավոր է արժանին մատուցել խաղացողներին, առանց որոնց հաջողության հասնելն անհնար կլիներ: Ֆուտբոլիստի կարիերայում խաղացել եմ մի շարք անվանի մարզիչների գլխավորությամբ: Սակայն երբեք չեմ մոռանա իմ առաջին մարզիչ Ժան-Կլոդ Սյուոդոյին «Նանտից», որն ինձ մարզչական աշխատանքի գաղտնիքներն է բացատրել», նշել է Դեշամը:**

# Ուժեղագույնները հայտնի են

Թենիսի միջազգային ֆեդերացիան անվանել է 2010-ի աշխարհի չեմպիոններին: Մենախաղում աշխարհի չեմպիոններ են հռչակվել դասակարգման ցուցակի առաջատարներ Ռաֆայել Նադալն ու Կարոլին Վոզնյացկին: Եթե իսպանացի թենիսիստը 2-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեց, ապա դանիացի Վոզնյացկին առաջին անգամ նման բարձր պարգեւի արժանացավ:

Երկվորյակ եղբայրներ Բոբ եւ Մայք Բրայանները 7-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեցին զուգախաղում: Կանանց զուգախաղում նման մրցանակի արժանացան արգենտինացի Խիսելա Դուլկոն եւ իտալացի Ֆլավիա Պենետան: Նրանք առաջին անգամ դափնեկիր դարձան:

## ՇԱԽՄԱՏ

# Գրիգորյանը շարունակում է հաղթարշավը

**Հայաստանի չեմպիոն Ավետիք Գրիգորյանը հաջող մրցելույթներն է շարունակում Բուլղարիայի Բանսկո քաղաքում ընթացող շախմատի մրցաշարում: 4-րդ տուրում նա իր 3-րդ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Գեորգի Տոմովին: Գրիգորյանը 3,5 միավորով բաժանում է 4-11-րդ տեղերը: Նա ընդամենը կես միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Բորիս Սավչենկոյին, Նանկո Դոբրեւին եւ Տամիր Նաբատուին:**

**Սավչենկոն հաղթեց Գրիգոր Գրիգորովին, Դոբրեւը 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Աթանասիոս Մաստրովասիլիսի հետ մրցավեճում, իսկ Նաբատուն պարտության մատնեց Պետար Առնաուդովին: 5-րդ տուրում Գրիգորյանը կմրցի Միոդրագ Պերունովիչի հետ:**

# Սկրիպչենկոն դուրս մնաց պայքարից

**Շախմատի աշխարհի կանանց առաջնությունում ասպարեզում մնացել են 4 շախմատիստուհիներ, որոնցից 3-ը ներկայացնում են Չինաստանը, մեկը՝ Հնդկաստանը:**

**Էլմիրա Սկրիպչենկո-Աղաբաբյանին չհաջողվեց կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճել: Նա 0,5-1,5 հաշվով պարտվեց չինացի Չիաո Սյունեին: Վերջինս կիսաեզրափակիչում կմրցի իր հայրենակցուհի Ռուան Լուֆեյի հետ: Նա պայքարից դուրս էր մղել հնդիկ շախմատիստուհի Հարիկա Դրոնավալիին (2,5-1,5):**

**Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող հնդիկ գրոսմայստեր Համպի Կոներուն եւ չինացի Հոու Յիֆանը: Կոներուն 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց չինացի Յու Վենցզյունին: Նույնպիսի արդյունք գրանցվեց նաեւ Հոու Յիֆանի եւ ուկրաինուհի Կատերինա Լահնոյի մրցավեճում:**

# Կառլսենը կրկին առաջինն է



**Շախմատի համաշխարհային դասակարգման առաջատար Մագնուս Կառլսենը 2-րդ տարին անընդմեջ դարձավ Լոնդոնի մրցաշարի հաղթող: Ավարտական տուրում հաղթելով մրցաշարի հետնապահ Նայջլ Շորթին, Կառլսենը վաստակեց 13 միավոր ու արժանացավ 50 հազար եվրո պարգեւավճարի: Վերջերս 20-ամյակը նշած նորվեգացի գրոսմայստերին 1-ին մրցանակը շահելու հնարավորություն ընձեռեցին իրենից կարգով ցածր շախմատիստների նկատմամբ տոնած 4 հաղթանակները, որոնք նրան 12 միավոր պարգեւեցին: Կառլսենին հաջողվեց առաջ անցնել աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդից եւ անգլիացի Լյուկ Մակշեյնից, որոնց հետ նա ավարտական տուրից առաջ գլխավորում էր աղյուսակը:**

**Ավարտական տուրում Անանդին չհաջողվեց հաղթել Կրամնիկին՝ պարտիան ավարտելով ոչ-ոքի: Մակշեյնն էլ հաշտություն կնքեց իր հայրենակից Դեւիդ Հաուելի հետ: Արդյունքում Անանդն ու Մակշեյնը 11-ական միավորով բաժանեցին 2-3-րդ տեղերը: 10-ական միավորով 4-5-րդ տեղերը բաժանեցին Հիկարու Նակամուրան եւ Վլադիմիր Կրամնիկը: Նակամուրան ոչ-ոքի խաղաց Մայքլ Ադամսի հետ: Վերջինս 8 միավորով գրավեց 6-րդ տեղը: Հաջորդ տեղերը զբաղեցրին Դեւիդ Հաուելը՝ 7 եւ Նայջլ Շորթը՝ 2 միավոր:**

**Մրցաշարի ավարտական տուրի օրը Լոնդոնում էին գտնվում աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովն ու Վիկտոր Կորչնոյը: Կասպարովը 7-րդ տուրի ընթացքում դահլիճում հավաքվածների համար մեկնաբանում էր պարտիաների ընթացքը:**

**Ընթացիկ մրցաշրջանը հաջող էր Մագնուս Կառլսենի համար: Տարեսկզբին նա համագործակցում էր Գարի Կասպարովի հետ, որի ազդեցությունը նրա խաղի վրա զգացնել տվեց: Կառլսենը հաղթող ճանաչվեց Վեյք Ան Զեեի մրցաշարում, որից հետո կապերը խզեց Կասպարովի հետ: Հունիսին նա հիանալի ոճով հաղթեց ռումինական Բազնա քաղաքում անցկացված «Մեծ սաղավարտի» փուլերից մեկում: Այդ պահին նրա անհատական վարկանիշը հասել էր 2825-ի: Սակայն հետագայում նրա խաղում կտրուկ անկում նկատվեց: Նա անհաջող խաղաց Խանտի Մանսիյսկում կայացած համաշխարհային օլիմպիադայում՝ առաջին խաղատախտակի վրա կրելով 3 պարտություն, իսկ Նորվեգիայի հավաքականը գրավեց միայն 51-րդ տեղը: Անհաջող էր նաեւ Մագնուսի ելույթը Բիլբաոյում անցկացված «Մեծ սաղավարտի» եզրափակիչում: Իսկ ահա հոկտեմբերին չինական Նանցզին քաղաքում կայացած մրցաշարում Կառլսենը կրկին փայլեց իր խաղով ու գերազանցելով Վիշվանաթան Անանդին եւ Վեսելին Թոփալովին, նվաճեց գլխավոր մրցանակը: Դրա շնորհիվ նորվեգացի գրոսմայստերը գլխավորեց շախմատի համաշխարհային դասակարգման ցուցակը:**

**Եվ այսպես, ավարտվեց այս տարվա շախմատի վերջին գերմրցաշարը: Հաջորդը կկայանա արդեն 2011-ի հունվարին հոլանդական Վեյք Ան Զեե քաղաքում: 14 գրոսմայստերների թվում կլինի նաեւ Լեւոն Արոնյանը:**

# «Բորուսիան» զրկվեց ուղեգրից

**Վեց խմբերում վերջնագիծը հատեց ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարը, որի արդյունքում եւս 3 թիմեր՝ «Սեւիլիան», «Նապոլին» եւ ՊԱՕԿ-ը իրավունք ստացան շարունակելու պայքարը 1/16 եզրափակիչում: Իսկ ահա ֆուտբոլի Բունդեսլիգայի առաջնության միանձնյա առաջատար Դորտմունդի «Բորուսիային» չհաջողվեց հաջորդ փուլի ուղեգիր նվաճել: J խմբում հանդես եկող «Բորուսիային» «Սեւիլիայի» հետ մրցախաղում միայն հաղթանակ էր անհրաժեշտ: Խաղասկիզբը շատ հաջող դասավորվեց գերմանացիների համար, որոնք արդեն 4-րդ րոպեին Կագավայի հարվածից հետո բացեցին հաշիվը: Սակայն հետագայում դաշտի տերերը 2 գոլ խփեցին ու հաշվի մեջ առաջ անցան: 2-րդ խաղակեսում Սուբոտիչը վերականգնեց հավասարակշռությունը, սակայն ավելին անել «Բորուսիային» չհաջողվեց: Այսպիսով, ուղեգիրը նվաճեց «Սեւիլիան»: Իսկ խմբի հաղթող դարձավ ֆրանսիական ՊՍԺ-ն, որը ոչ-ոքի (1-1) խաղաց Լվովի «Կարպատների» հետ:**

**D խմբում հանդես եկող ՊԱՕԿ-ը, Զագրեբում 1-0 հաշվով հաղթելով տեղի «Դինամոյին», 11 միավորով գրավեց 2-րդ տեղը: Խմբի հաղթող դարձավ իսպանական «Վիլյառեալը», որը հյուրընկալվելիս 2-1 հաշվով առավելության հասավ «Բրյուգեի» նկատմամբ: «Նապոլին» էլ K խմբում միայն ավելացված ժամանակում խփելով միակ գոլը, 1-0 հաշվով հաղթեց «Ստյաուային» ու մեկ միավորով գերազանցելով ռումինացիներին, հաջորդ փուլի ուղեգիր նվաճեց: Խմբի հաղթողը «Լիվերպուլն» է, որը ոչ-ոքի (0-0) խաղաց «Ուտրեխտի» հետ:**

**Մյուս խմբերում ժամկետից շուտ հաջորդ փուլում խաղալու իրավունք էին ստացել Կիեւի «Դինամոն», ԲԱՏԷ-ն, Մոսկվայի ԲԿՄԱ-ն, «Սպարտան», «Պորտոն» եւ «Բեշիքթաշը»: Ահա կայացած մյուս հանդիպումների արդյունքները. «Ալկմար»-«ԲԱՏԷ»՝ 3-0, «Դինամո» Կ.-«Շերիֆ»՝ 0-0, «Սպարտա»-ԲԿՄԱ (Մոսկվա)՝ 1-1, «Լոզան»-«Պալերմո»՝ 0-1, «Բեշիքթաշ»-«Ռապիդ»՝ 2-0, «Պորտո»-ԲԿՄԱ (Սոֆիա)՝ 3-1:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքում փոփոխությունները պայմանավորված են հանրապետության նախագահի հայտարարություններով

Միջազգային պայմանագրերի մասին օրենքում նախատեսվող փոփոխությունները թեեւ լայն ընդգրկում ունեն, սակայն, ըստ էության, հիմնականում առնչվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ հարաբերությունների իրավական կողմն ապահովելուն: Իսկ թե ինչու է այդ հարցը դարձել հրատապ, Շավարշ Քոչարյանը Ազգային ժողովում երեկ պարզաբանել է, որ «ՀՀ-ում միջազգային պայմանագրերի մասին» օրենքում փոփոխությունները պայմանավորված են Աստանայում ԵԱՀԿ գագաթաժողովին եւ Մոսկվայում ՀԱՊԿ գագաթաժողովին հանրապետության նախագահի հայտարարություններով:

«ՀՀ-ում միջազգային պայմանագրերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու օրինագծի համաձայն, Հայաստանը արձանագրում է, որ միջազգային պայմանագրի կողմ կարող է հանդիսանալ նաեւ սուբյեկտը, որը միջազգային ճանաչում չի ստացել: Սա իրավական հիմք կտա հետագայում միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող կամ այդպիսին չճանաչված կազմավորումների հետ խաղաղության, մարդու իրավունքների պաշտպանության, հումանիտար կամ ֆինանսատնտեսական հարցերը պայմանագրային հիմքերով կարգավորելու համար:

Օրինագիծը ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովում արժանացել է դրական եզրակացության: Ըստ այդմ,« Հայաստանի եւ ԼՂՀ միջեւ կնքվում են պայմանագրեր, գործում են միջխորհրդարանական հանձնաժողովներ, հետեւաբար օրինագիծը հնարավորություն կտա ՀՀ եւ ԼՂՀ ներկա հարաբերությունները տեղափոխելու հիմնավոր ու օրինական դաշտ:

## Հայ-հունական ռազմական հարաբերությունները՝ վաղնջական ժամանակներից մինչեւ մեր օրերը

Դեկտեմբերի 10-ին Աթենքում՝ Հունաստանի հին խորհրդարանի սրահում կայացավ **«Հայ-հունական ռազմական առնչությունները եւ համագործակցության պատմությունը»** գրքի երկլեզու՝ հայերեն եւ հունարեն հրատարակության շնորհանդեսը: Գրքի հեղինակը Հունաստանում եւ Կիպրոսում ՀՀ ռազմական կցորդ, գնդապետ **Սամվել Ռամազյանն** է: Շնորհանդեսին ներկա են եղել Հունաստանի ազգային հերոս Մանոլիս Գլեզոսը, խորհրդարանի նախկին նախագահ Ապոստոլոս Կակլամանիսը, հայ-հունական բարեկամության խմբի անդամ, ներքին գործերի նախկին նախարար Պրոկոպիոս Պավլոպուլոսը, ներկայացուցիչներ Հունաստանի պաշտպանության նախարարությունից, օտարերկրյա հյուրեր, հոգեւոր դասի ներկայացուցիչներ: Միջոցառմանը ելույթ ունեցած բանախոսները ընդգծել են, որ Ռամազյանի աշխատությունը գալիս է լրացնելու այն բացը, որտեղ թերացել է պատմագրությունը՝ շարադրելով հայ-հունական դարավոր հարաբերությունները: Ընդգծվել է, որ մինչ այսօր չկար ծավալուն աշխատություն՝ հայ-հունական կոնկրետ ռազմական հարաբերությունների վերաբերյալ: Գրքում հեղինակը ներկայացրել է պատմությանը հայտնի բոլոր փաստերը՝ սկսած վաղնջական ժամանակներից մինչեւ մեր օրերը: Փաստերի վրա հիմնված աշխատությունը վերհանել է հայկական ու հունական զինվորական ու պատմական արխիվները, մեջբերումներ են կատարված մասնավոր հավաքածուներից, ներկայացված են լուսանկարներ, որոնք առանձին կարեւորություն են հաղորդել գրքին:

Իր ելույթում Սալոնիկի Արիստոտելյան համալսարանի նորագույն պատմության դոկտոր Իոաննիս Կ. Խասիոտիսը հատկապես կարեւորել է գրքի հաղորդած ազդակը երիտասարդ սերնդին՝ «խորհրդածելու, թե ի՞նչ ճանապարհով են անցել հայ-հունական հարաբերությունները եւ ինչպե՞ս պետք է առաջնորդվել սրընթաց զարգացումներով ու աշխարհա-քաղաքական զարգացումներով, արդի աշխարհում»:

Շնորհանդեսի ավարտին հուշանվերներով են պարգեւատրվել գրքի հրատարակությանն աջակցած եւ ներդրում կատարած անձինք՝ Պատերազմական թանգարանի նախկին տնօրեն, գրքի մեկենաս Հայ Զաքյանը, հրատարակիչ՝ Աթանասիոս Ստամուլիսը եւ բարերար Հովսեփ Քասիսյանը:

**Հ. Ա.**

## Սաակաշվիլին կեղծե՞լ է կենսագրությունը



Վրաստանի նախագահ Սաակաշվիլին իր պաշտոնական կայքէջում «գեղեցկացրել» է սեփական կենսագրությունը, դեկտեմբերի 16-ին հաղորդում է «Գեորգիեն նախրիչթըն»-ը՝ հենվելով Ինտերպրեսնյուզի աղբյուրների վրա, որն էլ իր հերթին վկայաբերում է վրացական մի թերթ տվյալները:Ըստ աղբյուրի, մեկ ամիս առաջ Վրաստանի նախագահի պաշտոնական կայքէջում հրապարակված կենսագրական տվյալները կեղծ են:Խոսքն առավելապես վերաբերում է 1990-ականների կովկասյան հակամարտություններին:

Վրացական Ինտերպրեսնյուզը մանրամասնում է՝ Սաակաշվիլին մի կոնֆերանս է կազմակերպել, որի մասնակիցները Վրաստանի կազմի մեջ ընդգրկված, նրան անհավասարմություն ցույց տված հանրապետություններից են եղել:Ըստ նախագահի կայքէջի շարադրանքի, խոսքը 1992-ին մարդու իրավունքների նորվեգիական ինստիտուտում կազմակերպված կոնֆերանսին Հարավօսական հանրապետության հետ զինադադարի արձանագրության մասին է, ներկայցվում է նաեւ կենտրոնական իշխանության եւ Աբխազիայի միջեւ գերիների փոխանակման հարցում, ինչպես նաեւ ԼՂ հակամարտության շուրջ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գործընթացում Սաակաշվիլու ունեցած դերակատարումը:

Հակամարտությունների փորձագետ Պաատա Զաքարեիշվիլին հայտնել է, թե այդ թվերի Սաակաշվիլուն շատ լավ է ճանաչել եւ հստակ գիտի, որ նա Աբխազիայի հետ կապ չի ունեցել:Այդ ժամանակ Սաակաշվիլին պատգամավոր էլ չի եղել: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի եւ Ադրբեջանի գերիների փոխանակման գործում Սաակաշվիլու մասնակցությանը, Զաքարեիշվիլին այն «չափազանց երեւակայական» է որակում:

Փորձագետի տվյալներով, աբխազական պատերազմի ժամանակ Սաակաշվիլին Վրաստանում «թաքնվում» էր:Զաքարեիշվիլին ենթադրում է, թե արտասահմանյան գործընկերների մոտ հաստատուն ձեռք բերելու նպատակն է պարտադրել Սաակաշվիլուն կեղծել կենսագրությունը:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## Վարդաքարը առանց դպրոցի՞

**«Ազգ» թերթի խմբագրությանը**

**Տարիներ շարունակ հույսով էինք ապրում, որ մի օր էլ մեր երեխաները նոր դպրոցում կսովորեն: Բայց կատարվեց անհավատալին: Այսօր մենք գիտենք, որ խաբված ենք: Խաբված ենք շատ մտածված քայլերի, կազմված կեղծ ծրագրերի պատճառով:**

**2009 թ. փետրվարին լուր տարածվեց, որ Նոր կյանքի միջնակարգ դպրոցը ինչ-որ ծրագրի մրցույթում շահել է, շահել է, բայց արդեն բացահայտված կեղծված տվյալներով: Շիրակի նախկին մարզպետ տիկին Լ. Նանյանը ինչ-ինչ տեղեկություններից ելնելով, հայտարարում էր, թե Վարդաքարը անհեռանկարային գյուղ է, որն ունի դպրոցահասակ 80 երեխա, իսկ Նոր կյանքի դպրոցում կա 400 սովորող: Այնինչ Վարդաքարում կար 107 աշակերտ, Նոր կյանքում՝ 216 (այսօրվա դրությամբ՝ 182):**

**Ավելին, այս ուսումնական տարում Վարդաքարի միջնակարգ դպրոցի I դասարանում կա 17, իսկ Նոր կյանքի դպրոցում՝ 13 աշակերտ: Այս «անհեռանկարային» որակավորմամբ գյուղը կանգնել է 173-ամյա դպրոցը կորցնելու իրողության առաջ:**

**Նոր կյանքի միջնակարգ դպրոցի 400 տեղանոց շենքի հիմնավերանորոգման աշխատանքները շարունակվում էին, երբ հայտարարվեց, որ մեր գյուղի դպրոցի նոր շենքի կառուցումը ընդգրկվել է 2010 թ. պետբյուջեի ծրագրում:**

**Կազմվեցին նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, ընտրվեց շինարարությունն իրականացնող կազմակերպությունը, որն էլ ստանալով հանձնարարություն, քանդեց դպրոցի հին շենքը: Սակայն մեր ուրախությունը կարճ տեւեց: 2010 թ. հոկտեմբերի 15-ին դադարեցվեցին շինարարական աշխատանքները, եւ պարզվեց, որ դպրոցի կառուցման համար պետական բյուջեից հատկացում չի արվել ոչ 2010, ոչ էլ 2011 թթ.:**

**Վարդաքարցին, որ 1960 թ. սկսած սպասում է խմելու եւ ոռոգման ջրի, բազում այլ հոգսերի լուծմանը, այսօր կանգնած է իր հինավուրց դպրոցը կորցնելու վտանգի առաջ: Բոլոր ներդրումային ծրագրերը շրջանցում են գյուղի հոգսերը, վերադաս մարմինները միայն խոստումներ են շռայլում, խոստումներ, որոնք արդեն մի մեծ կապոց են դարձել: Այսօր մեր երեխաները կրթությունը շարունակում են գյուղապետարանի շենքում: Եթե շարունակվի անտարբերությունը, եւ մեզ ստիպեն մեր երեխաներին տեղափոխել երկու կիլոմետր հեռու գտնվող հարեւան գյուղի դպրոց, ապա մենք կհրաժարվենք առաջարկից եւ մեր բնակարանները կվերածենք դպրոցի, ինչպես 1903 թ., երբ յուրաքանչյուր հայի տուն դարձավ կրթական օջախ:**

**Դիմելով Ձեզ՝ լիահույս ենք, որ հրապարակելով մեր նամակը՝ ի վերջո պատկան մարմիններին կհիշեցնենք իրենց խոստումները, եւ գյուղը դուրս կգա այդ ծանր վիճակից:**

**Բազմաթիվ վարդաքարցիների ստորագրություններ**

## Սեփենան հաշվառումից հանելու եւ հաշվառման վերականգնելու համար 5000 դրամ չի պահանջվի

**Կառավարության երեկվա որոշմամբ տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանելը եւ հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցի հաշվառումը վերականգնելը այլեւս չեն համարվի հաշվառման գործողություններ, եւ դրանց համար չի պահանջվի վճարել օրենքով սահմանված 5000 դրամ վճարը: Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց այս որոշման կարեւորությունը հատկապես գյուղատնտեսության ոլորտում զբաղված բնակիչների համար:**

**Ա. Ս.**

## Հայաստանում հաշվառումից դուրս սննդամթերք չի ներմուծվի

**«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում կառավարության երեկ հաստատած լրացումը պայմանավորված է Հայաստանի տարածք ժամկետանց սննդամթերք եւ սննդային հավելումներ ներմուծելու եւ շուկայում դրանց սպառման հնարավորությունը բացառելու անհրաժեշտությամբ: Խոսելով այդ մասին՝ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ մոտ ապագայում Հայաստանում չի լինելու մի ապրանք, որը հաշվառումից դուրս է, այսինքն՝ չունի շտրիխ-կոդ: Ըստ վարչապետի, այս նախագիծն ուղղված է սպառողի շահերի պաշտպանությանը:**

**Ա. Ս.**

**Վաճառվում է**

Ավտոմեքենա AUDI 80 B-4 թափք, 1994 թ., 2,0 լ, գույնը՝ կանաչ-մետալիկ, գազով, լավ վիճակ:
**Հեռ.՝ 099-34-17-36**

**Վաճառվում է**

Ավտոմեքենա MERCEDES A class-ի: 1999թ., շարժիչը՝ 1,6 լ., սպիտակ, գերազանց վիճակ:
**Հեռ.՝ 099-25-88-71**

## «Ucom»-ը եւ «Orange»-ն ավարտեցին ցանցերի փոխկապակցման փորձարկման աշխատանքները

Երեկ ավարտվեցին «Ucom» եւ «Orange Armenia» ընկերությունների համապատասխանաբար ֆիքսված եւ բջջային հեռախոսային ցանցերի փոխկապակցման աշխատանքները: Ընկերությունները ավարտին հասցրեցին թեստավորման եւ փորձարկման աշխատանքները, եւ այժմ հնարավոր է դարձել երկու օպերատորների ձայնային ծառայությունների բաժանորդների միջեւ զանգերի իրականացումը:

**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

- **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ ու Խորհրդատվություն**
- **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնում է ստորեւ նշված անշարժ գույքի աճուրդային վաճառքը՝

- Արտադրական տարածք, ընդ. մակերեսը՝ 3573.1 քմ, որից 404.0 ք.մ. ընդհանուր օգտագործման, հողամաս՝ 0.06057 հա սեփականության իրավունքով եւ 0.0110 հա ընդհանուր օգտագործման: Հասցե՝ ք. Երեւան, Խանջյան 19: Մեկնարկային գինը՝ 570995040 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական եւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում մինչեւ 26.02.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը

11.00-ից – 16.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել www.akson.am:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝16.12.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: